ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՄՏԱՀԱՆԴՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Մտահանգման խնդիրը Դավիթ Անհաղթը իրավացիորեն առնչում է իմացության և նրա ձևերի հետ։ Վերջիններս, նրա կարծիքով, հինգն են՝ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք։ «Քանզի պարտ է գիտել զհինգ գիտական զօրութիւնս՝ զզգայութիւն, զերևակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս»[1]։

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է «կարծիքի» մեկնաբանումը Դավիթ Անհաղթի կողմից։ Նրա բացատրմամբ, կարծիքը երկու կարգի է լինում՝ պատճառաբանված (=հիմնավորված) և չպատճառաբանված (=անհիմն)։ Պատճառաբանված կարծիքը դատողություններից բխող եզրակացությունն է[2]։

---

[1] *Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 108։*

[2] *Բարձր գնահատելով պրոֆ. Ս. Ս. Արևշատյանի գերը Դավիթ Անհաղթի աշխատությունների համահավաք բնագիրը կազմելու և ռուսերեն թարգմանելու գործում, հարկ է նկատել, որ թարգմանություններում որոշ դեպքերում տեղ են գտել անճշտություններ։ Ս. Արևշատյանը «եզրակացությունը» թարգմանում է որպես* «умозаключение», *որը ճշգրիտ չէ։ Համմտ. «եւ պարտ է գիտել, զի կարծիք հանդերձ պատճառաւ եզրակացութիւն է առաջարկութեանց...» նախադասությունը Ս. Արևշատյանի ռուսերեն թարգմանության հետ.* «Необходимо знать, что причинно обоснованное мнение есть *умозаключение* из предложений...» *(«Սահմանք իմաստասիրութեան», էջ 108, 109)։ (Երկու դեպքում էլ ընդգծումն մերն է)։ «Եզրակացությունը» պետք է թարգմանվի որպես* «заключение»: *Դա ակնհայտ է նաև այն օրինակի վերլուծությունից, որ հետևում է Դավիթ Անհաղթի վերը նշված բացատրությանը. «...Որգոն, հոգի ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ է։ Ահա եզրակացութիւն առաջարկութեանց, այսինքն հոգի անմահ, որ կոչեցաւ կարծիք հանդերձ պատճառաւն» (նույն տեղում, էջ 108)։ Օրինակով Դավիթ Անհաղթը պարզորոշ ցույց է տալիս, որ գործ ունենք նախադրյալներից բխող եզրակացության հետ («հոգին անմահ է»), որը և միևնույն ժամանակ պատճառաբանված կարծիք է։ Այդ հատվածը Ս. Արևշատյանը թարգմանել է հետևյալ կերպ. «...*Например, душа есть самодвижущееся, самодвижущееся есть вечнодвижущееся, а вечнодвижущееся бессмертно. Вот это и есть умозаключение из предложений, то есть что душа бессмертна. Это и называется причинно обоснованным мнением *(նույն տեղում, էջ 109)։ Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն բանի վրա, որ «առաջարկություն» բառը ոչ թե սոսկ նախադասություն է, այլ տրամաբանական նախադասություն, այսինքն դատողություն (ռուսերենում՝* суждение), *իսկ քննարկվող կոնտեքստում այն պետք է թարգմանել որպես նախադրյալ* (посылка): *Այդ նշանակում է «եզրակացութիւն առաջարկութեանց» դարձվածքը ռուսերեն պետք է թարգմանել ոչ թե որպես* «умозаключение из предложений» *(բոլոր մյուս նկատառումներից բացի այս դարձվածքը ճիշտ չէ նաև այն պատճառով, որ իրար հետ անօրինականորեն զուգակցված են տրամաբանական* (умозаключение) *և քերականական* (предложений) *կատեգորիաները), այլ որպես*

Այլ կերպ ասած մտահանգման եզրակացությունը Դավիթ Անհաղթը անվանում է պատճառաբանված կարծիք. դա այն իմաստով, որ մտահանգման եզրակացությունը (անհրաժեշտ մտահանգումներում) անհրաժեշտաբար բխում է նախադրյալներից։

Տրամախոհությունը Դավիթ Անհաղթը սահմանում է որպես պատճառաբանված գիտելիք ընդհանուրի մասին. «Իսկ տրամախոհութիւն է ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութիւն»[3]։ Դավիթ Անհաղթը պատասխանում է նաև այն հարցին, թե ինչ տարբերություն կա պատճառաբանված կարծիքի և տրամախոհության միջև, գրելով. «առ որս պարտ է ասել, եթէ կարծիք հանդերձ պատճառաւ, եզրակացութիւն առաջարկութեանց է, իսկ տրամախոհութիւն դտող զառաջարկութեանց՝ ի հասարակաց խոստովանութեանց է, և հիւսող և եզրացուցիչ»[4]։ Այլ կերպ ասած, տրամախոհությունը հետևյալ նպատակներն է հետապնդում. գտնել բոլորի կողմից ընդունելի նախադրյալներ, զուգակցել դրանք այնպես, որ դրանից եզրակացություն բխի։ Սա մտային այն գործողության նկարագրությունն է, որ Դավիթ Անհաղթի հայ հետևորդներին հիմք է տվել «տրամախոհություն» բառը օգտագործել որպես «մտահանգման» հոմանիշ։

Խոսելով «անհրաժեշտության» հասկացության մասին («...Կարևոր է՝ որ առընթեր գոլով գոյացուցանէ, և ոչ գոլով ապականէ»)[5] և նշելով անհրաժեշտության տեսակները, Դավիթ Անհաղթը դրանցից մեկը համարում է մտահանգման նախադրյալների և եզրակացությունների միջև կապը. «...կամ որպէս հետևիլն, յորժամ ասեմք՝ եթէ կարևորապէս հետևի առաջարկութեանցն եզրակացութիւնն»[6]։ Ասածից, իհարկե, չի բխում, թե բոլոր մտահանգումներում (անգամ՝ կանոնավոր) եզրակացությունը անհրաժեշտաբար է բխում նախադրյալներից։ Սակայն Դավիթ Անհաղթը նկատում է մտահանգման կարևոր խմբի համար էականը՝ եզրակացության անհրաժեշտաբար բխելը նախադրյալներից, մի հանգամանք, որ այսօր էլ հիմք է տալիս մտահանգումները բաժանել երկու խմբի՝ անհրաժեշտ և ճշմարտանման մտահանգումների։

«заключение из посылок» եզրակացություն նախադրյալներից կամ նախադրյալներից բխող եզրակացություն, կամ, Դավիթ Անհաղթի տերմինաբանությամբ՝ «եզրակացութիւն առաջարկութեանց» (նույն տեղում, էջ 108)։ Այդ նույն թարգմանության երկրորդ հրատարակությունում «предложение» բառն իրավացիորեն փոխարինված է «посылка» բառով, սակայն, ցավոք, եզրակացությունը թարգմանված է որպես «умозаключение» («умозаключение из посылок»), որն անընդունելի շեղում է բնագրից (Давид Анахт, Сочинения. Составление, перевод с древнеармянского, вступительная статья и примечания С. С. Аревшатяна, М., 1975, էջ 78)։

3 Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 108։

4 Նույն տեղում։

5 Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1976, էջ 32։

6 Նույն տեղում։ Ակադ. Հ. Մանանդյանի կողմից հրատարակված Արիստոտելի կատեգորիաներին նվիրված մեկնության մեջ մի պարզ օրինակով ցույց է տրված, թե ինչ է նշանակում կապի բացակայությունը սիլլոգիզմի նախադրյալների միջև, որը և անհնարին է դարձնում եզրակացության հետևեցնելը տրամաբանական կապի մեջ չգտնվող նախադրյալներից. «Մարդ կենդանի է, այլ եւ քար. մարմին է. ապա ուրեմն՝ հոգի անմահ է» («Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» ի լոյս էած Յ. Մանանդյան, Ս.—Պետերբուրգ, 1911, էջ 44—45)։

Մեկնաբանելով Արիստոտելին, Դավիթ Անհաղթը նշում է մտահանգման՝ (հավաքմանց)[8] հինգ տեսակ՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, իմաստական (սոփեստական), քերթողական (կամ պոետական)։ Այս վերջինս հայ հեղինակը համարում է (առասպելախառը)։ 1) Ապացուցական այն սիլլոգիզմն է, որը ամբողջությամբ բաղկացած է ճշմարիտ դրույթներից[9]։ 2) Եթե վերջիններս սուտ են, սիլլոգիզմը քերթողական է[10]։

7 Մտահանգումների վերլուծությունը զգալի տեղ է գրավում Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի» աշխատության մեջ։ Ճիշտ է, «Առաջին անալիտիկան» Արիստոտելն սկսում է այն դրույթով, թե իր աշխատության նպատակն ապացուցման հետազոտությունն է (Аристотель. Соч. в четырех томах, т. 2, М., 1978, էջ 119), մինչդեռ Դավիթ Անհաղթի մեկնարանմամբ Արիստոտելի «Առաջին անալիտիկայի» նպատակը պարզ սիլլոգիզմի հետազոտությունն է (Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1967, էջ 38։ Տվյալ հոդվածում, երբ խոսքը վերաբերվի նշված աշխատությանը, վերջինիս էջերը կնշվեն տեքստում)։ Այս թվացող հակասությունը Դավիթ Անհաղթը հեշտությամբ է լուծում, նշելով, որ պարզ սիլլոգիզմն Արիստոտելը մերձեցնում է ապացուցողական սիլլոգիզմի հետ (էջ 40, 68)։ Նկատենք նաև, որ «Առաջին անալիտիկայում» ապացուցողական նախադրյալն Արիստոտելը տարբերակում է դիալեկտիկական նախադրյալից, միևնույն ժամանակ ցույց տալով, որ սիլլոգիզմի ձևավորման գործում դրանք նույն դերն են խաղում. «Отличается же доказывающая посылка от диалектической тем, что доказывающая есть принятие одного из членов противоречия (ибо тот, кто доказывает, не спрашивает [о нем], а принимает [его]), диалектическая же есть вопрос относительно [того или другого] члена противоречия. Однако в образовании силлогизма они ничем не отличаются друг от друга...» (Аристотель, Соч., т. 2, էջ 119)։

8 «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի» համահավաք տեքստի ռուսերեն թարգմանությունում (Երևան, 1967) Ս. Արևշատյանը «հաւաքումն» տերմինը մեծ մասամբ թարգմանել է որպես «суждение», մինչդեռ պետք է լինի «силлогизм»։ Այդ սխալի վրա ուշադրություն է դարձրել Է. Հարությունյանը «Силлогистика Аристотеля в истолковании Давида Анахта» ուշագրավ հոդվածում («Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 3)։ Երկրորդ վերահրատարակությունում (Давид Анахт, Сочинения, М., 1975). թարգմանիչը որոշ ճշգրտումներ է մտցրել, «суждение» բառը հաճախ փոխարինելով «силлогизм» բառով, սակայն հետևողական չի եղել, որը կարող է բնագրին ոչ ծանոթ, միայն ռուսերենից օգտվող ընթերցողին որոշ թյուրըմբռնումների առիթ տալ։

9 «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի», գրքի ինչպես երևանյան (1967), այնպես էլ մոսկովյան (1975) հրատարակությունում Ս. Արևշատյանն այս դեպքում ևս «հաւաքումն» բառը փոխադրում է որպես «суждение»։ Սակայն գա պետք է լինի գարձյալ «սիլլոգիզմ»։ Ճիշտ է «Առաջին անալիտիկայում» Արիստոտելը խոսում է ապացուցական և դիալեկտիկական նախադրյալների մասին, որոնք ոչ այլ ինչ են, քան դատողություններ։ Սակայն եթե Դավիթ Անհաղթը նկատի ունենար «նախադրյալ» հասկացությունը, կօգտագործեր «առաջարկութիւն» բառը, ինչպես իր աշխատության համապատասխան տեղերում։ Մինչդեռ Դավիթ Անհաղթը այս դեպքում ևս նկատի ունի սիլլոգիզմը, քանի որ Արիստոտելն ապացուցական և դիալեկտիկական (ինչպես նաև էրիստիկական) է համարում նաև մտահանգումները։ «Առաջին անալիտիկայում» այդ հարցը քննարկելիս նա ընթերցողի ուշադրությունը հրավիրում է «Տոպիկայի» վրա։ Վերջինում Արիստոտելը հետևյալ կերպ է բնութագրում ապացուցական (ապոդիկտիկական) մտահանգումը. «Доказательство имеется тогда, когда умозаключение строится из истинных и первых [положений] или из таких, знание о которых берет свое начало от тех или иных первых и истинных [положений]» (Аристотель, Соч., т. 2, էջ 349)։

10 «Քերթողական մտահանգում» հասկացությունը որոշակի այլափոխություններով հասել է մեր օրերը, օգտագործվում է նաև «պոետական տրամաբանություն» տերմինը (տե՛ս, օրինակ, V. M. Hamm, Language, Truth and Poetry, Marquette University Press, 1960, էջ 66)։

3) Եթե ճշմարիտն ու սուտը հավասար չափով (=իրավունքով) հանդես են գալիս, սիլլոգիզմը ճարտասանական է, որտեղ կան և՛ առարկելի, և՛ անառարկելի գրույթներ[11]։ 4) Եթե ճշմարիտն ավելին է, քան սուտը, սիլլոգիզմը տրամաբանական է[12]։ 5) Եթե սուտն ավելին է, քան ճշմարիտը, սիլլոգիզմը իմաստական է (սոփեստական)[13] (էջ 40)։

11 Հռետորության կապը տրամաբանության, ինչպես և ընդհանրապես փիլիսոփայության հետ այս կամ այն չափով ընդգծվել է փիլիսոփայության ու տրամաբանության պատմության ընթացքում. այդ կտրի վրա հատուկ ուշադրություն է դարձվում մեր օրերում, որի մասին է վկայում ինչպես 1960 թվականից Պենսիլվանիայում (ԱՄՆ) հրատարակվող „Philosophy and Rhetoric" հանդեսը, այնպես էլ վերջինիս շուրջը տարբեր երկրներից (հատկապես ԱՄՆ-ից և Բելգիայից) համախմբված հեղինակների խնդրս առարկային վերաբերող աշխատությունները։

12 «Տրամաբանական սիլլոգիզմը» համապատասխանում է Արիստոտելի «դիալեկտիկական մտահանգում» հասկացությանը, որը «Տոպիկայում» ընութագրված է հետևյալ կերպ. «Диалектическое же умозаключение—это то, которое строится из правдоподобных [положений]» (Аристотель, Соч., т. 2, էջ 349)։

13 «Իմաստական սիլլոգիզմը» համապատասխանում է Արիստոտելի «էրիստիկական մտահանգմանը», որը «Տոպիկայում» հետևյալ ընութագիրն է ստացել. «Эристическое же умозаключение исходит из [положений], которые кажутся правдоподобными, но на деле не таковы, или оно кажется исходящим из правдоподобных либо кажущихся правдоподобными [положений] (Аристотель, Соч., т. 2, էջ 349)։

Սիլլոգիզմի ճիշտ նույն հինգ ձևերի թվարկումը և նույն մեկնաբանումը տրված է «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխատությունում (էջ 17—18), որը, ինչպես Ա. Բուսեն, այնպես էլ ակադ. Հ. Մանանդյանը վերագրել են էլիաս Իմաստասերին (Հակոբ Մանանդյան, Հունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928)։ Պրոֆ. Ս. Արևշատյանի կարծիքով նշված աշխատությունը պատկանում է Դավիթ Անհաղթին (С. С. Аревшатян. Формирование философской науки в Древней Армении (V—VI вв.), Ереван, 1979, էջ 278—285)։ Սիլլոգիզմի հինգ ձևերի առաջադրումը և նմանատիպ հիմնավորումը կարող է ծառայել որպես լրացուցիչ վկայություն Ս. Արևշատյանի վարկածի օգտին։ Ճիշտ է, նման փաստերից բխող եզրակացությունը կարող է լինել միայն հավանական։ Նույնը կարելի է ասել նաև այլ դիտարկումների վրա հենվող եզրահանգումների մասին։ Այսպես, օրինակ, սիլլոգիզմի բնույթի ձևայնացման տեսակետից «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխատությունը որոշակի իմաստով տարբերվում է Դավիթ Անհաղթի մյուս աշխատություններից։ Նշված աշխատասիրությունում հեղինակը սիլլոգիզմն ակնհայտորեն արտահայտում է փոփոխականների (տառերի) միջոցով. «Քանզի Արիստոտէլ ի բանականումն փոխանակ իրաց դնէ զտառս զ զայրն, գրեն, զգիմ, ասելով եթէ այրն բենին զոյանա եւ բենն գիմին՝ ապա ուրեմն եւ գիմին զոյանայ այրն, եւ ի ձեռն սոցա ուսուցանէ դշարահիւմոնս շարաբանութեանցն...» (էջ 21)։ Սա շատ բնորոշ մոտեցում է և սիլլոգիստիկայի պատմության ճիշտ պատկերացման տեսակետից կարևոր նշանակություն ունի։ Հատկանշական է, որ Արիստոտելի աշխատությունների ժամանակագրությունը որոշելիս Ի. Բոխենսկին, ի թիվս այլ չափանիշների, դիմում է նաև այն բանին, թե որ աշխատություններում է Արիստոտելը դիմում սիլլոգիզմի կառուցվածքը փոփոխականների (տառերի) միջոցով արտահայտելուն և այդ կարգի աշխատությունները համարում է ավելի ուշ շրջանի գործեր, քան այն գործերը, որոնցում սիլլոգիզմը արտահայտված է կոնկրետ օրինակներով (I. M. Bochenski. A. History of Formal Logic. University of Notre Dame Press, 1961, էջ 42, տե՛ս նաև А. С. Ахманов, Логическое учение Аристотеля, М., 1960, էջ 87)։ Պետք է համաձայնել Ա. Ախմանովի հետ, որ այդ չափանիշի դերը չպետք է գերագնահատել։ Սակայն նշված հանգամանքը հաշվի չառնելը նույնպես սխալ կլինի։ Տվյալ դեպքում դրությունը բարդանում է նաև նրանով, որ Արիստոտելի «Անալիտիկաներին» նվիրված Դավիթ Անհաղթի աշխատությունը մեզ լրիվ չի հասել։ Չի բացառված, որ մեզ չհասած հատվածներում ևս կարող է տեղ գտած լինել սիլլոգիզմի կառուցվածքի արտահայտումը տառերի միջոցով։ Սակայն այդ հնարավորությունն անտեսելու դեպքում պետք է ենթադրել, որ եթե «Անալիտիկաների» և «Կատեգորիաների» մեկնությունների հեղինակը նույնն

Նկարագրելով սիլլոգիզմի հինգ տեսակները (ճշմարտության նկատմամբ դրանց դրույթների հարաբերության տեսանկյունից), Դավիթ Անհաղթը նկատում է, թե ոմանց կարծիքով գոյություն ունեն երեք տեսակի սիլլոգիզմ՝ ապացուցական, տրամաբանական, իմաստական, և դա այն պատճառով, որ տրամաբանականը նրանք միակցում են ճարտասանականին, իսկ իմաստականը՝ քերթողականին։ Հավանաբար, Դավիթ Անհաղթը նկատի ունի Արիստոտելին, որի մոտ իրոք խոսվում է մտահանգման երեք տեսակների մասին՝ ապացուցական (ապոդիկտիկական), դիալեկտիկական և էվրիստիկական (սոփեստական)։ Քանի որ այս մտահանգումների նկարագրությունը Արիստոտելի կողմից տրված է «Տոպիկայում», ուստի պարզ է նաև, որ իր ուսումնասիրությունն նվիրելով «Անալիտիկայի» վերլուծությանը, Դավիթ Անհաղթը ամենևին էլ չի սահմանափակվում այդ աշխատությամբ և անհրաժեշտության դեպքում դիմում է Ստագիրիտի ուսմունքին ընդհանրապես, անկախ այն բանից, թե որտեղ է այն շարադրված։

Դավիթ Անհաղթը նշում է այն փաստարկները, որոնցով հիմնավորվում է մտահանգման երեք և ոչ թե հինգ տեսակի առանձնացման անհրաժեշտությունը։ Դա առնչվում է իմացության և գիտելիքի ձևերի հետ. դրանք են՝ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք (էջ 42)։ Այս եղանակների մեջ կան այնպիսիները, որոնք բոլոր պարագաներում գործ ունեն մասնավորի հետ։ Այդպիսիք են զգայությունը և երևակայությունը, որը կարող է ներառնել միայն այն, ինչ զգայությունից է ստացել։ Մինչդեռ կարծիքը, տրամախոհությունը և միտքը իմացության ընդհանուր ձևեր են, այն տարբերությամբ, որ կարծիքը չի բացահայտում պատճառը, մինչդեռ տրամախոհությունը պատճառը բացահայտող իմացություն է, միտքը՝ ավելի բարձր է, քան պատճառի իմացությունը (էջ 42)։ Իմացության այս ձևերից զգայությունը և երևակայությունը, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, գործ չունեն սիլլոգիզմի հետ, քանի որ դրանք մասնավորի և ոչ թե ընդհանուրի իմացությունն են։ Միտքը ողջ իրականության ինքնաիմացությունն է («ինքնատեսողք ամենայն իրաց») և այդ պատճառով գործ չունի սիլլոգիզմի հետ։ Կարծիքը միայն եզրակացությանն է առնչվում, ուստի նույնպես գործ չունի սիլլոգիզմի հետ։ Եվ միայն տրամախոհությունն է, որ առնչվում է սիլլոգիզմի հետ («բայց միայն տրամախոհութիւն է, որ հաւաքէ»)։ Տրամախոհությունն է, որ կարող է հանդես գալ սիլլոգիզմի երեք ձևերով. երբ սիլլոգիզմի նախադրյալները ելնում են պատճառի բացահայտումից, ապա այն ապացուցական է։ Եթե այդ նախադրյալները հենվում են կարծիքի վրա, սիլլոգիզմը տրամաբանական (=դիալեկտիկական) է։ Իսկ եթե սիլլոգիզմի նախադրյալները հենվում են զգայությունների տվյալների վրա, ապա մտահանգման եզրակացությունը մասնավոր բնույթի գիտելիք է (էջ 42)։

Ահա Դավիթ Անհաղթի մոտ նկարագրված սիլլոգիզմի դասակարգման մեկ այլ եղանակ, որի դեպքում գործ ունենք սիլլոգիզմի երեք տեսակների հետ, որոնցից վերջինը որոշակիորեն տարբերվում է Արիստոտելի «Տոպի-

---

է, ապա դրանք գրվել են տարբեր ժամանակ, որոշ հարցերի նկատմամբ տարբեր մոտեցումներով։

կայում» նկարագրված մտահանգման երրորդ տեսակից (էրիստիկական կամ սոփեստական մտահանգումից)։

Ո՞րն է սիլլոգիզմի տեսակների ճանաչողական արժեքը։ Նախ, ճանաչողական տեսակետից ամենաարժեքավորը Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, ապացուցական սիլլոգիզմն է։ Այս վերջինս պիտանի է ամեն մի փիլիսոփայության համար՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական, քանի որ այն հնարավորություն է տալիս ճշմարտության փոխարեն չընդունել կարծեցյալ ճշմարտությունը, սուտ գիտելիքը և չարը չգործադրել (էջ 44)։

Պարզ (կամ ապացուցական) սիլլոգիզմի օգուտը նաև այն է, որ մի ինչ-որ բանի միջոցով ձեռք է բերվում մեկ այլ բան։ Դավիթ Անհաղթի կարծիքով, բնությունը ոչ ամեն բան է թաքցրել, այլապես ոչ մի բանի չէինք կարող հասնել և ոչ ամեն ինչ է դարձրել հայտնի, այլապես ոչ ոք ոչինչ քննության խնդիր չէր դարձնի։ Մինչդեռ բնությունը ինչ-որ բան թաքցրել է մեզնից և ինչ-որ բան հայտնի է դարձրել մեզ և այդ պատճառով էլ հնարավորություն է ընձեռել՝ փնտրել և գտնել։ Եվ դա սիլլոգիզմի էությունն է, քանզի այն բանի օգնությամբ, ինչ ցույց է տալիս բնությունը, սիլլոգիզմը բացահայտում է այն, ինչ թաքցրել է բնությունը մեզնից։ «Քանզի ոչ զամենայն ինչ թագոյց բնութիւնս, զի ոչ կարող գոյր դտանել ինչ ոք, և ոչ դարձեալ զամենայն ինչ յայտնի արար, զի ոչ ոք էր ապա որ ի խնդիր անկաներ։ Այլ է ինչ՝ զոր թաքոյց և է ինչ՝ զոր յայտնեաց. վասն որոյ խնդրելն է յուզելն և գտանելն։ Արդ եկն էանց ի մեջ հաւաքումն, որպէս զի յորոց եցոյց՝ բնութիւնս, գտցէ զայն՝ զոր թաքոյցն...» (էջ 44)։

Սիլլոգիզմի ճանաչողական նշանակությունը նաև այն է, որ դրա միջոցով բացահայտում ենք մեր սեփական գոյությունը, քանի որ մարդն է միայն բանական էակ և մտահանգող էակ. «Պիտանացու առաջիկայ իրողութիւնս և ի մեր ինքնեաց գոյութիւնս. քանզի մարդ միայն բանաւոր յէիցս՝ է հաւաքող էիցս» (էջ 44)։ Ըստ էության Դավիթ Անհաղթը այս դեպքում նշում է մտահանգման դերը ինքնաճանաչման պրոցեսում։

Դավիթ Անհաղթը քննարկում է այն հարցը, թե ինչու Արիստոտելը նախ հետազոտում է դատողությունը որպես սիլլոգիզմի նախադրյալ, ապա տերմինը և, վերջապես, սիլլոգիզմը, ինչպես նաև սիլլոգիզմի ձևերը, կատարյալ սիլլոգիզմի հարցը և հիմնավորում Արիստոտելի տեսակետը խնդրո առարկայի վերաբերյալ։ Փաստարկելով սիլլոգիզմի ուսումնասիրման հիշատակված կարգը, Դավիթ Անհաղթը ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ՝ ա) Արիստոտելի ուսմունքի համաձայն սիլլոգիզմի նախադրյալները կարող են լինել կամ ստորոգական (=կատեգորիկ) կամ ստորադրական (=թէական, պայմանական), («Երկակի ելոյ առաջարկութեան, կամ ստորոգականի, և կամ ստորադրականի...», էջ 76)։ բ) Արիստոտելը սահմանում է կատեգորիկ (ստորոգական) դատողությունը, ելնելով այն բանից, որ նման ձևով բացահայտում է նաև պայմանական (ստորադրական) դատողության էությունը, քանի որ երբ տարակուսանք է առաջանում, մտահանգման նախադրյալը կարգի է բերվում, այն կատեգորիկ դատողության հանգեցնելով («...Զստորոգականն միայնումն սահմանէ. և որպէս ի ձեռին նորա զստորադրականն ունելով։ Քանզի ստորադրականն՝ յորժամ յերկրայս լինին, ստորոգականացն պէտս ունին առաջարկութեանց յարդարումն», էջ 76)։ գ) Նախադրյալը

Արիստոտելը սահմանում է որպես մի ինչ-որ բանի մասին մի ինչ-որ բան հայտնող նախադասություն (=դատողություն), («Նախադասութիւն է յայտնող ինչ ըստ ումեքում», էջ 76)։ Եվ ապա՝ ամեն մի նախադրյալ սահմանում է որպես խոսք՝ որը մի ինչ-որ բանի մասին մի ինչ-որ բան է հայտնում («...Զամենայն առաջարկութիւն որպէս այսու սահմանէ, բան է որումն ըստ ումեքում», էջ 84)։ Քննարկելով այս սահմանումը, Դավիթ Անհաղթը նշում է, որ «ինչ ըստ ումեքումն» (ինչ-որ բան ինչ-որ բանի մասին) բառերից դեռևս չպետք է եզրակացնել, թե խոսքը վերաբերում է միայն հաստատական դատողություններին։ Սակայն այդ խոսքերով Արիստոտելը սիլլոգիզմի նախադրյալները սահմանազատում է պայմանական դատողություններից, քանի որ վերջիններս ոչ թե ինչ-որ բանի մասին մի ինչ-որ բան են հաղորդում, այլ այն, թե մի ինչ-որ բան ինչ է կամ ինչ չէ («Այլ ինչ ըստ ումեքում այժմ առ որոշումն ասացեալ է ստորադրականայն առաջարկութեանց. քանզի նոքա ոչ յայտնեն ըստ ումեքումն, այլ ումեմն զոլոյ զի՞նչ է, և ումեմն ոչ գոլոյ զինչ ոչ է», էջ 76)։ դ) Արիստոտելը սահմանում է ընդհանուր սիլլոգիզմը («զընդհանուր հաւաքաբանութիւն սահմանեսցէ»), իսկ վերջինս բաղկացած է ընդհանուր բնույթի նախադրյալներից, այդ պատճառով էլ նա սահմանում է նախ և առաջ ընդհանուր դատողություն։ Նախադրյալի, որպես դատողության սահմանումը, ինչպես նշում է Դավիթ Անհաղթը, Արիստոտելը տվել է «Ցաղագս մեկնության» աշխատությունում, նշելով, թե «Նախադասութիւն է բան՝ ընդունակ ճշմարտութեան և ստութեան (էջ 76)[14]։ Դավիթ Անհաղթը ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ դատողության տվյալ սահմանումը տարածվում է նաև պայմանական (ստորադրական) նախադրյալի վրա։ Իսկ այժմ (—սիլլոգիզմի կառուցվածքի կապակցությամբ) Արիստոտելը դարձյալ սահմանում է կատեգորիկ դատողությունը, «վասն զի և սորա միայնոյ սահման ուղղութեան պէտս ունէր» (էջ 76—78)։ ե) Արիստոտելը քննության նյութ է դարձնում այն հանգամանքը, թե ինչպիսին են սիլլոգիզմի նախադրյալներն ըստ քանակի՝ ընդհանուր, մասնավոր և անորոշ։ Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ Արիստոտելը չի հիշատակում եզակի դատողությունը, քանի որ վերջինս նույնպես անորոշ է։ Սակայն եզակի դատողությունը նրա մեկնաբանմամբ տարբերվում է մյուս անորոշ դատողություններից այն բանով, որ եզակի դատողությանը հատուկ է ունենալ մի բան, ինչ-որ բան, որ չունեն, իսկ մյուս անորոշ դատողություններին ոչ հատուկ է ունենալ այդ նույն բանը և ոչ էլ ունեն (էջ 78)։

Դավիթ Անհաղթը քննական վերլուծության է ենթարկում սիլլոգիզմի նախադրյալների բնույթը, պաշտպանում Արիստոտելի տեսակետն այն մասին, որ ապացուցական, տրամաբանական (=դիալեկտիկական), իմաստասիրական (=սոփեստական) և քերթողական (=պոետական) բնույթի նախադրյալներից առաջին երկուսն են, որ իրոք պետք է հանդես գան սիլլոգիզմի կազմում (էջ 78—80)։ Հետևելով Արիստոտելին, Դավիթ Անհաղթը ցույց է տալիս ապացուցական և տրամաբանական (=դիալեկտիկական) նախադրյալների միջև

---

14 Արիստոտելի համապատասխան աշխատության ռուսերեն թարգմանությունում կարդում ենք. «Но не всякая речь есть высказывающая речь, а лишь та, в которой содержится истинность или ложность чего-либо...» (Аристотель, Соч., т. 2, էջ 95)։

եղած տարբերությունը՝ ինչպես ըստ նրանց նշանակության («պիտոյիւք»), այնպես էլ բովանդակությամբ («նիւթով»)։ Առաջին հատկությունը դրսևորվում է այն դեպքում, երբ տրամաբանական (=դիալեկտիկական) դատողության հարցադրումը վերաբերում է հակասությանը, և սիլլոգիզմի նախադրյալն ընդգրկում է ոչ թե ողջ հակասությունը, այլ վերջինիս մի մասը[15]։ Ի տարբերություն տրամաբանական (=դիալեկտիկական) դատողության, ապացուցական դատողությունն առնչություն չունի հարցադրման հետ։ Ապացուցական նախադրյալին դիմողը կարծեցյալը (=ենթադրականը) ընդունում է որպես ճշմարիտ, թեպետ դատողին դա այդպես չի թվում (էջ 82)։

Ապացուցական և տրամաբանական (=դիալեկտիկական) նախադրյալների միջև տարբերությունն ըստ բովանդակության Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ այն է, որ առաջին դեպքում պնդումը (=ժխտումը) կարող է անկարծելի (—անհավանական, անիրևակայելի) լինել, բայց ճշմարիտ, իսկ երկրորդ դեպքում այն ամենը, ինչ ենթադրելի (=կարծելի) է, դատողության առարկա է, թեև սուտ է (էջ 82)։

Սիլլոգիզմի նախադրյալների բնույթը քննարկելիս Դավիթ Անհաղթը հատուկ ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ Արիստոտելի մեկնաբանման համաձայն որոշ նախադրյալների մասին ասվում է, որ մեկը ամբողջությամբ բովանդակում է մյուսի մեջ, իսկ մյուսների մասին՝ ամբողջությամբ չի բովանդակվում մյուսի մեջ, վերագրվում է բոլորին կամ էլ չի վերագրվում ոչ մեկին. «Ցետ որոյ յարադրէ մեզ և զզանազանութիւնս առաջարկութեանցն՝ ղներ բոլորումն և ղոչ ներ բոլորումն, գրստ ամենայնումն և գրստ ոչ ումեքումն...» (էջ 112)։ Ըստ այդմ էլ դատողությունները լինում են հաստատական («ստորասական») կամ ժխտական («բացասական»)։ «Մարդը կենդանի էակ է» դատողության մեջ «մարդ» հասկացությունն ամբողջությամբ բովանդակում է, ներառվում է «կենդանի էակ» հասկացության մեջ։

Շարադրելով արիստոտելյան այս դրույթը, Դավիթ Անհաղթը քննարկում է այն տարակուսանքները, որ առաջանում են խնդրո առարկայի վերաբերյալ։ Նախ, ինչու ենք մենք ասում, որ «մարդը» ամբողջությամբ բովանդակվում է «կենդանի էակի» մեջ, երբ վերջինս ներառնում է և՛ «մարդուն», և՛ «ձիուն», և՛ «եզին»։ Այս հարցին Դավիթ Անհաղթը տալիս է հետևյալ պատասխանը. կենդանի էակի սահմանումն ամբողջությամբ տարածվում է մարդու վրա։

Երկրորդ տարակուսանք. ինչո՞ւ, երբ ասում ենք՝ մարդը կենդանի էակ է, դա նշանակում է «մարդն» ամբողջությամբ ներառվում է «կենդանի էակի» մեջ, իսկ երբ ասում ենք կենդանի էակ՝ ամեն մարդու մասին, ապա այդ դեպքում հատկությունը վերագրվում է բոլորին։ Այս տարակուսանքը Դավիթ Ան-

---

15 Արիստոտելի «Մեկնության մասին» աշխատությունում տվյալ հարցի մասին կարդում ենք. «Итак, если диалектический вопрос требует ответа—или [признания] посылки, или [признания] другого члена противоречия (ведь посылка есть один член противоречия), то не может быть один ответ на них, ибо и вопрос не один, даже если он правилен» (նույն տեղում, էջ 106)։

հաղթը ցրում է հետևյալ կերպ. առաջին դեպքում ստորոգումը վերաբերում է անորոշին. «ամբողջությամբ ներառնել» վերաբերում է այն բանին, ինչ վերագրվում է («շարամերձում») և ոչ թե այն բանին ինչ սահմանվում է («առորոշվում»)։ Իսկ երկրորդ դեպքում «կենդանի էակը» ենթական է (սուբյեկտը), «իսկ ենթակայումն վայել է առորոշումն» (էջ 114), ուստի «կենդանի էակը» պետք է վերագրվի ամեն մի մարդու։

Երրորդ տարակուսանք. ինչո՞ւ Արիստոտելի մոտ «ամբողջությամբ բովանդակվում է» բառերը նախորդում են «վերագրվում է բոլորին» բառերին։ Դավիթ Անհաղթը դա բացատրում է քննարկվող հարցի վերլուծական բնույթով, որը և պայմանավորվում է վերլուծական մոտեցման անհրաժեշտությունը. «...Եթէ վասն զի վերլուծական է իրողութիւնս, և վայել է վերլուծութեան մանաւանդ վերլուծութիւն, քան զվայրիչութիւն» (էջ 114)։ Այս բացատրությունը մեկ անգամ ևս վկայում է, որ հայ փիլիսոփան քննարկվող հարցի լուծման մեթոդը պայմանավորում է իրեն՝ հարցի բնույթով։

Հենվելով Արիստոտելի վրա, Դավիթ Անհաղթը տերմին (—սահման) է համարում այն, ինչի վերլուծվում է դատողությունը (=նախադասությունը)։ Դատողության տերմիններն են ստորոգյալը և ենթական։ Այս վերջիններս Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ սիլլոգիզմի նախադրյալի կարևոր, իշխող տարրերն են։ Նախադրյալը, որպես դատողություն, ինչպես ընդգծում է Դավիթ Անհաղթը, բաղկացած է նաև այլ տարրերից. դրանց թվին են պատկանում՝ շաղկապը (օրինակ, «էր» բառը), դատողության քանակը և որակը բնորոշող բառերը և այլն (էջ 86—88)։

Միևնույն ժամանակ Դավիթ Անհաղթը նշում է, որ սուբյեկտը և պրեդիկատը (ենթական և ստորոգյալը) նախադրյալի (դատողության) կարևորագույն տարրերն են, քանի որ առանց դրանց չի կարող լինել նախադրյալ, մինչդեռ առանց թվարկված մյուս մասնիկների («թարց յեղանակի և բացման և առստորոգման, առորոշման», էջ 88), նախադրյալը կարող է գոյություն ունենալ։

Հետևելով Արիստոտելին և վերլուծելով սիլլոգիզմի բաղկացուցիչ տարրերը՝ նախադրյալները և տերմինները, Դավիթ Անհաղթը բնութագրում է սիլլոգիզմն ընդհանրապես, ելնելով վերջինիս Արիստոտելի տված սահմանումից[16]. «Հավաքաբանութիւն է բան, յորում դրիցելոց ոմանց՝ նմա նովին այլ ինչ առկացելեօքն՝ ի հարկէ հանդիպի զնոյնս այսպէս ունելով»[17]։ Դավիթ Անհաղթը հատկապես նշում է, որ սիլլոգիզմի արիստոտելյան սահմանումը վերաբերում է սիլլոգիզմին ընդհանրապես, ամեն մի սիլլոգիզմին և ոչ թե կատեգորիկ կամ պայմանական սիլլոգիզմին. «Բայց սահմանէ զամենայն հաւաքաբանութիւն, զստորոգականն և կամ զստորադրականն՝ ոչ զայս և ոչ զայն։ Քանզի բացատրեցեալդ սահման ամենայնում հաւաքաբա-

---

16 «...Силлогизм же есть речь, в которой, если нечто предположено, то с необходимостью вытекает нечто отличное от положенного в силу того, что положенное есть» (Նույն տեղում, էջ 120)։

17 Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 204ա, հմմտ. ձեռ. № 1763, էջ 175բ։ Մեջբերումները կատարում ենք ձեռագրերից, երբ, մեր կարծիքով, համահավաք բնագրում տեղ է գտել անճշգրտություն, կամ էլ, երբ նախընտրելի ենք համարում այն ձեռագիրը, որից չեղվել է «Համահավաքը»։

նութեան պատշաճի» (էջ 92)։ Այս բացատրությունն ունի սկզբունքային նշանակություն, որն ակնհայտ է դառնում Դավիթ Անհաղթի հետագա վերլուծության մեջ։ Հայ փիլիսոփան նշում է, որ Արիստոտելի մեկնիչ Աղէքսանդրոսի (=Ալեքսանդրի) կարծիքով Արիստոտելը սահմանել է ոչ թե սիլլոգիզմն ընդհանրապես, այլ կատեգորիկ սիլլոգիզմը։ Այդ տեսակետը Ալեքսանդրը փորձել է հիմնավորել երկու փաստարկով. նախ՝ Արիստոտելը տվել է միայն կատեգորիկ բնույթի նախադրյալի սահմանումը, իսկ կատեգորիկ դատողություններից կարող է առաջանալ կատեգորիկ սիլլոգիզմ. երկրորդ՝ Արիստոտելը տարբերակում է կատարյալ և ոչ-կատարյալ սիլլոգիզմները, իսկ այդպիսիները կարող են լինել միայն կատեգորիկ սիլլոգիզմները։ Դավիթ Անհաղթը չի համաձայնում Ալեքսանդրի փաստարկների հետ։ Նա մասնավորապես նշում է, որ նախ, Արիստոտելը «Մեկնության մասին» աշխատությունում սահմանել է ընդհանրապես ամեն մի նախադրյալ (դատողություն)[18], իսկ «Առաջին անալիտիկա» աշխատությունում խոսում է կատեգորիկ բնույթի նախադրյալի մասին, քանի որ ինչպես այլ առիթով արդեն ընդգծել է Դավիթ Անհաղթը, երբ տարակուսանք է առաջանում սիլլոգիզմի նախադրյալի մասին, այն հանգեցվում է կատեգորիկ դատողության։ Դավիթ Անհաղթը ավելացնում է նաև, որ պայմանական նախադրյալների բնույթին Արիստոտելը նույնպես անդրադառնում է «Առաջին անալիտիկայում»։

Արիստոտելը հետազոտել է այն հարցը, թե ինչ բան է սիլլոգիզմը։ Սակայն այդ հարցին, Դավիթ Անհաղթի կարծիքով, պետք է նախորդեր այն, թե գոյությո՞ւն ունի արդյոք սիլլոգիզմը։ Դավիթ Անհաղթը իր առջև խնդիր է դնում ապացուցել, որ իրոք գոյություն ունի սիլլոգիզմը։ Այդ խնդիրը նրա առջև ծառանում է էֆեկտիկոս-փիլիսոփաների առարկությունների պատճառով, որոնք անճանաչելիություն են քարոզում և դրանով իսկ ժխտում սիլլոգիզմի՝ որպես իմացության գործիքի դերը (էջ 94)։

Հավատարիմ մնալով փիլիսոփայելու իր մեթոդին, այս դեպքում ևս Դավիթ Անհաղթը նախ շարադրում է սիլլոգիզմի դեմ սպեկտիկական կողմնորոշման ներկայացուցիչներ էֆեկտիկոսների փաստարկները և ապա հերքում դրանք։ Դիմելով արիստոտելականներին (—ճիմականներին), էֆեկտիկոսները հարցնում են. սիլլոգիզմի գոյությունն ապացուցվում է սիլլոգիզմի օգնությամբ, թե՞ առանց սիլլոգիզմի։ Եթե առանց սիլլոգիզմի է, ապա չի կարելի համաձայնվել, որովհետև չի ապացուցվում։ Իսկ եթե սիլլոգիզմի օգնությամբ, ապա որպես հավաստի հիմք ընդունվում է այն, ինչ դեռևս կասկածելի է։ Էֆեկտիկոսների կարծիքով դա ինքնաապացուցման եղանակ է, որը ըստ էության հանգեցնում է հոռի անվերջության։

Էֆեկտիկոսների տեսակետի դեմ Դավիթ Անհաղթը օգտագործում է նրանց իսկ փաստարկներն ու փաստարկման եղանակը։ Ինչպե՞ս են էֆեկտիկոսները պնդում, թե սիլլոգիզմ գոյություն չունի՝ ապացուցելո՞վ, թե՞ առանց ապացուցման։ Ինչպե՞ս կարելի է սիլլոգիզմի գոյությունը ժխտել սիլլոգիզմի միջոցով։ Դավիթ Անհաղթը հանգում է այն եզրակացության, թե սիլլոգիզմը, որը ցույց է տալիս, թե գոյություն ունի սիլլոգիզմ, ինքն իրեն էլ է ցու-

---

[18] Аристотель, Соч., т. 2, էջ 95։

ցադրում, թեպետև ոչ որպես սիլլոգիզմ, այլ որպես սիլլոգիզմին ենթակա («...թէպէտ և ոչ որպէս հաւաքաբանութիւն, այլ որպէս հաւաքաբանելի» էջ 94)։ Նույն պարագան է և սահմանման դեպքում. սահմանումը սահմանվում է սահմանման միջոցով, սակայն այդ դեպքում այն հանդես է դալիս ոչ որպես սահմանում, այլ որպես սահմանելի (էջ 94)։

Սակայն Դավիթ Անհաղթը չի բավարարվում սիլլոգիզմի օգտին միայն տրամաբանական փաստարկներ բերելով. Սիլլոգիզմի գոյությունը նա պայմանավորում է բնության իմացության անհրաժեշտությամբ և բխեցնում բնության մեջ տիրող իրական հարաբերությունների զուգորդումներից։ Նա կրկին այն միտքն է ընդգծում, թե բնությունը ոչ ամեն ինչ է թաքցրել մեզնից, այլապես ոչինչ չէինք կարող հայտնաբերել և ոչ էլ ամեն ինչ է հայտնի դարձրել. այլապես հարկ չէր լինի փնտրել և գտնել։ Ահա թե ինչու մարդկային տրամախոհությունը դիմում է սիլլոգիզմին։ Մարդիկ նկատում են, որ բոլոր իրերը ոչ ամեն ինչում են միմյանց հաղորդակից, այլապես ամեն ինչ ինքն իրեն կցուցադրեր, մի բան, որ հատուկ է զգայություններին և ոչ թե սիլլոգիզմին և միևնույն ժամանակ իրերը ոչ ամեն ինչում են տարբերվում իրարից, այլապես մենք չէինք կարող մտահանգել, քանի որ երկու ժխտական (բացասական) նախադրյալներից ոչ մի եզրակացություն չի բխում (էջ 94—96)։

Այսպիսով, և՛ գոյաբանորեն, և՛ իմացաբանորեն հիմնավորելով սիլլոգիզմի անհրաժեշտությունը, Դավիթ Անհաղթը նորից անդրադառնում է սիլլոգիզմի արիստոտելյան սահմանմանը՝ այն տրամաբանորեն հիմնավորելու նպատակով. «հաւաքաբանումն է բան, յորում դրիցելոց ոմանց, այլ ինչ տոկացելովք ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ (էջ 96)։ Դավիթ Անհաղթը ցույց է տալիս, որ արիստոտելյան այս սահմանումն ունի սեռ։ «Բանը» սեռային հասկացություն է ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, իմաստական, քերթողական մտահանգումների համար։ Քննարկվող սահմանումն ունի նաև բաղկացուցիչ զանազանություններ (=տեսակային տարբերություններ), որոնք Դավիթ Անհաղթը դարձնում է մանրամասն հետազոտության առարկա։ Նա նշում է, որ տվյալ սահմանման մեջ որոշ տեսակային տարբերություններ ըստ բովանդակության են («ի նիւթոյ են»), իսկ ուրիշները՝ ըստ տեսակի («ի տեսակէ»)։ Այսպես, օրինակ, «ոմանց» և «դրիցելոցն» հասկացություններն արտահայտում են տեսակային տարբերություններն ըստ բովանդակության, իսկ «այլ ինչ տոկացելեօքն ի հարկէ» արտահայտում է տեսակային տարբերություններն՝ ըստ տեսակի։ Իսկ սիլլոգիզմի տեսակները որոշվում են եզրակացությամբ (էջ 96)։

Չբավարարվելով այս վերլուծությամբ, Դավիթ Անհաղթը նորից անդրադառնում է սիլլոգիզմի արիստոտելյան սահմանմանը՝ բառ առ բառ վերլուծելու նպատակով. «բայց հաւաստեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցդ առանձին» (էջ 96)։ Այդ վերլուծությունը կարևոր նշանակություն ունի։

Սիլլոգիզմի արիստոտելյան սահմանումը Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ սկսվում է «բան՝ յորում դրիցելոց ոմանց» բառերով։ Հայ տրամաբանը նախ և առաջ ուշադրություն է դարձնում դրիցելոց բառի վրա և այդ առթիվ նկատում, որ Արիստոտելը խոսում է հաստատման և ոչ թե ենթահաստատման («ստորադրիցելոց») մասին։ Եթե Արիստոտելն օգտագործեր վերջին

հասկացությունը, ապա այդ դեպքում սիլլոգիզմի սահմանումը կվերաբերեր միայն պայմանական («ստորադրական») սիլլոգիզմին։ Միևնույն ժամանակ քննարկվող սահմանման մեջ չի օգտագործված «ստորոգել» բառը («և ոչ ստորոգիցելոց ասաց», էջ 96)։ Այլապես խոսքը կվերաբերեր միայն կատեգորիկ («ստորոդրական») սիլլոգիզմին։ Մինչդեռ օգտագործելով «դրիցելոց» բառը, այսինքն՝ հավաստի («խոստովանիցելոց»), Արիստոտելը, Դավիթ Անհաղթի մեկնարանմամբ, միևնույն սահմանմամբ ընդգրկել է ինչպես կատեգորիկ, այնպես էլ պայմանական սիլլոգիզմը, քանի որ երկուսի նախադրյալներն էլ հավաստի են, և դրանք հիմք են տալիս բխեցնելու հավաստի եզրակացություն։

Դավիթ Անհաղթը նշում է նաև, որ «դրիցելոց» ասելով, Արիստոտելը սիլլոգիզմի նտիտադրյալները տարբերել է («հակորոշել») այլ արտահայտություններից, ինչպիսիք են՝ ըղձական, հրամայական և հակորոշումով բացահայտվող արտահայտությունները (էջ 98)։

Հայ տրամաբանը հատուկ ուշադրություն է դարձնում նաև այն բանի վրա, որ «հաստատում» բառն օգտագործված է քննարկվող սահմանման մեջ հոդնակի («դրիցելոց») և ոչ թե եզակի («դրիցելոյ») ձևով և դա բացատրում է նրանով, որ սահմանումն ընդգրկում է նաև սիլլոգիզմի այլ տեսակներ՝ «վասն շարամերձականաց, և տարալծականաց, և վասն հակադարձմանց՝ և վասն եզառածիցն. քանզի ի նոսա մի զմիոյ զկնի երթայ» (էջ 98)։

Դավիթ Անհաղթի կողմից բերված համապատասխան օրինակները ցույց են տալիս, որ նա նկատի ունի պայմանական («շարամերձական»), բաժանարար («տարալծական») մտահանգումները, անմիջական մտահանգումը շրջման միջոցով («հակադարձում») և էնտիմեման («եզառածիցն»), որն անվանում է նաև «անաւարտուն հաւաքաբանութիւն» (էջ 98)։ Առիթից օգտվելով Դավիթ Անհաղթը նշում է նաև, որ կրճատ մտահանգումներին հաճախ դիմում են հռետորները։ Նա նշում է նաև, որ հռետորների կողմից կրճատ մտահանգումներին դիմելն ունի իր պատճառները՝ 1) ժամանակի խնայում, քանի որ հռետորները հաճախ ժամանակի կարիք են զգում. 2) դատավորներին շողոքորթելու նպատակով. կրճատ մտահանգումներին դիմելով՝ հռետորներն այն տպավորությունն էին ստեղծում, թե դատավորները ևս գիտեն սիլլոգիզմների ստեղծման հնարները. 3) դատավորներին իրենց ձայնակիցը դարձնելու նպատակով, որպես բաց թողած մտքի լրացնողների, քանի որ յուրաքանչյուր ոք ավելի շատ հավատում է իր ասածին, քան ուրիշի, 4) հռետորները կամայաբար բաց են թողնում մտահանգման մեծ նախադրյալը, քանի որ բազմիցս դիմում էին սուտ ելակետի, իսկ նման նախադրյալի կրճատումը թաքցնում է նրանց սուտը (էջ 100)։

Դավիթ Անհաղթի կողմից մտահանգման այս տեսակների քննարկումը նպատակ ուներ ապացուցելու արիստոտելյան սահմանման մեջ «հաստատում» բառի հոգնակի ձևի կիրառման անհրաժեշտությունը, քանի որ, ինչպես ցույց է տալիս հայ մտածողի վերլուծությունը, սիլլոգիզմում մենք գործ ունենք առնվազն երկու դատողության հետ և հնարավորություն ունենք բազում նախադրյալներ ունենալ («Վասն զի և բազում առաջարկութիւնս կարողութիւն է դնել ի հաւաքաբանութեանս, էջ 100—102)։ Այս նկատառումներն էլ Դավիթ Անհաղթի կարծիքով պայմանավորել են սիլլոգիզմի անվանումը

հայերենում՝ «հաւաքաբանութիւն», որ նշանակում է «բաղհաւաքում», իսկ «բաղ» մասնիկը նշանակում է «բազմություն», ինչպես նաև «հավաքակցություն», որ ցույց է տալիս, թե մեկը բխում է ոչ թե միայն մեկից, այլ բազմությունից (էջ 102)։

Ըստ էության հավաքաբանությունը Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ ընդգրկում է ոչ միայն սիլլոգիզմը, այլև մտահանգման մյուս տեսակները ևս։ Եվ եթե «հավաքաբանության» փոխարեն օգտագործում ենք «սիլլոգիզմ» բառը, ապա այն պատճառով, որ ավանդական տրամաբանության մեջ «սիլլոգիզմը» ևս հաճախ կիրառվել է լայն, վերը նշված իմաստով։

Շարունակելով սիլլոգիզմի արիստոտելյան սահմանման վերլուծությունը բառ առ բառ, Դավիթ Անհաղթը քննարկում է հետևյալ բառակապակցությունը. «Այլ ինչ առկացելեօքն ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ» և այս դեպքում ուշադրությունը կենտրոնացնում է «այլ» բառի վրա։ «Այլ» բառով, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, շեշտվում է այն հանգամանքը, որ եզրակացությունը տարբերվում է նախադրյալներից, իսկ վերջիններս էլ իրարից. «Այլն առկայանայ, որպէս զի այլ եղիցի եզրակացութիւն առաջարկութեանց, և ոչ մի ինչ ի նոցանէ իցէ, նոյն...»[19] (էջ 102—104)։ Սիլլոգիզմի այս մեկնաբանությունը լուսաբանող օրինակն իր կառուցվածքով նույնպես որոշակի լույս է սփռում տրամաբանության պատմության մի կնճռոտ հարցի վրա, որին կանդրադառնանք ավելի ուշ։ Ահա այդ օրինակը. մարդը կենդանի է, կենդանին արարած է, ապա ուրեմն մարդն արարած է։ Դավիթ Անհաղթը նշում է, որ «մարդն արարած է» դատողությունը չի համընկնում նախադրյալներից և ոչ մեկի հետ և մտահանգման մեջ այն, ինչ չի համընկնում նախադրյալների հետ, տարբեր է նրանցից՝ եզրակացություն է (կամ «բաղեզերումն», էջ 104)։ Դավիթ Անհաղթը դրա հետ միաժամանակ նկատում է, որ այս ամենը ասվել է, որպեսզի սիլլոգիզմի արիստոտելյան ըմբռնումը տարբերվի ստոիկների ըմբռնումից, որոնց մոտ եզրակացությունը համընկնում է նախադրյալներին։ «Ասացաւ և վասն տարբերեցելոցն առ ի ստոյիկեանցն բաղհաւաքմանցն, որք զբաղեզերումն զնոյն առնէին միում յառաջարկութեանց» (էջ 104)։ Սիլլոգիզմի ստոիկյան ըմբռնումը Դավիթ Անհաղթը լուսաբանում է հետևյալ օրինակով. «Եթէ տիւ է, տիւ է. այլ արդ տիւ է, ապա ուրեմն տիւ է» և եզրակացնում, որ դա սոսկ կրկնություն է, քանի որ ոչ թե մեկը մյուսի միջոցով է դրսևորվում, այլ նույնը նույնի միջոցով։

Ցույց տալով «այլ» բառի դերը քննարկվող բառակապակցությունում, Դավիթ Անհաղթն անցնում է հաջորդ բառին՝ «ինչ» բառի նշանակությանը։ Նա զգուշացնում է, որ ամենևին էլ չպետք է արհամարհել այդ բառը, որ այն ունի «անչափ զորություն» ինչպես սիլլոգիստական («բաղհաւաքականացն»), այնպես էլ ոչ-սիլլոգիստական («անբաղհաւաքմանց») կապակցություններում («լծակութեանց»)։

Ըստ էության տվյալ սահմանման մեջ «ինչ» բառի քննարկման կապակցությամբ Դավիթ Անհաղթը դիմում է «անբաղհաւաքական» (ոչ-սիլլոգիստական) մտահանգումների գաղափարի մեկնաբանմանը։

Դավիթ Անհաղթը նշում է, թե անհրաժեշտ է հաշվի առնել. որ գոյություն ունեն նույն զուգակցությունների («նոյն հիւսմանց») մի շարք կապակ-

19 Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 206ա։

ցություններ («լծակցութիւնք»)։ Եվ երբ փոխվում է (դատողության) մատերիան մի (նախադրյալի) և ոչ թե բազում նախադրյալների միջոցով, ապա գործ ունենք սիլլոգիզմի հետ։ Իսկ երբ նույն զուգակցությունների մի քանի կապակցություններ են և մի տերմինի փոփոխմամբ տարբեր եզրակացություններ ենք բխեցնում, այդ դեպքում գործ ունենք ոչ-սիլլոգիստական մտահանգման հետ (էջ 104)։ Դավիթ Անհաղթի այս մեկնաբանություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ «անբաղահաւաքական» մտահանգումներ ասելով նա նկատի ունի պոլիսիլլոգիզմը։

Սիլլոգիզմի արիստոտելյան սահմանման հետևյալ բառը, որ դառնում է Դավիթ Անհաղթի վերլուծության անմիջական առարկան, «ի հարկէ» բառն է։ «Ի հարկէ» (—անհրաժեշտաբար) բառը Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ կիրառված է սիլլոգիզմի արիստոտելյան սահմանման մեջ՝ ցույց տալու համար, որ եզրակացության անհրաժեշտաբար բխեցումը նախադրյալներից բնորոշ է սիլլոգիզմին՝ ի տարբերություն [ոչ լրիվ] ինդուկցիայի և անալոգիայի։ Դավիթ Անհաղթը նշում է, որ մտահանգման եզրակացությունը կարող է բխել. ա) նախադրյալների և եզրակացության նույն ընդհանրության դեպքում («ի հանգիտէն զհանգէտն յարդարէ»)։ Ահա այդ լուսաբանող օրինակն ըստ Դավիթ Անհաղթի. Դիոնիսիոսին չպետք է թիկնապահ տալ, քանի որ Պիսիստրատոսը թիկնապահ ստանալով բռնակալ դարձավ։ Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է անալոգիային։ Դավիթ Անհաղթը նշում է, որ նման եզրակացությունն անհրաժեշտաբար չի բխում, քանի որ պարտադիր չէ, որ Դիոնիսիոսը բռնակալ դառնա թիկնապահ ստանալով, եթե համանման պայմաններում այդպիսին է դարձել Պիսիստրատոսը։ բ) Եզրակացությունն ավելի ընդհանուր է, քան նախադրյալները («ի նուազէն ըզմեծն յար դար է», էջ 106)։ Մտահանգման այս ձևը Դավիթ Անհաղթն հետևելով Արիստոտելին, մակածություն (=ինդուկցիա) է անվանում։ Այս դեպքում ևս Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ մտահանգման եզրակացությունն անհրաժեշտաբար չի բխում նախադրյալներից։ Դավիթ Անհաղթը դա ցույց է տալիս հետևյալ օրինակի լուսաբանմամբ. այն նախադրյալներից, թե մարդու ներքին ծնոտը շարժվում է, ձիու ներքին ծնոտը շարժվում է, անհրաժեշտաբար չի բխում, թե բոլոր կենդանիների ներքին ծնոտը շարժվում է։ Եվ իրոք, փյունիկաթևի, կոկորդիլոսի և գոճամի վերին ծնոտն է շարժվում։ գ) Եզրակացությունը պակաս ընդհանուր է, քան նախադրյալները («ի մեծէն զնուազն հաւաստեցուցանեն», էջ 106)։ Այս մտահանգումն է, որ Դավիթ Անհաղթն արիստոտելյան ավանդության համաձայն սիլլոգիզմ («բաղհաւաքում») է անվանում, վերջինիս բնորոշ հատկությունը՝ նախադրյալներից եզրակացության անհրաժեշտաբար բխելն է համարում և լուսաբանում հետևյալ օրինակով. եթե ամեն մի մարդ երկոտանի է, ապա և Սոկրատեսը երկոտանի է։ Այս եզրակացությունը բխում է անհրաժեշտաբար։

Դավիթ Անհաղթն այնուհետև անցնում է սիլլոգիզմի արիստոտելյան սահմանման «հանդիպի» հասկացության դերի քննարկմանը տվյալ կապակցության մեջ։ Հայ հեղինակի մեկնաբանմամբ՝ «հանդիպի» բառը կիրառված է որպեսզի սահմանումն ընդգրկի նաև տրամաբանական (=դիալեկտիկական) և սոփեստական սիլլոգիզմները, որոնք արտահայտում են համապատասխանաբար մարթելին (=կարելին) և անկարելին, «քանզի արամաբա-

նականքն զմարթելին ժողովեն. իսկ իմաստականքն զանկարելին» (էջ 106)։ Բայց այդ մտահանգումները, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ. երբեմն կարող են պարունակել նաև անհրաժեշտը, և դա կարող է տեղի ունենալ պատահարար, այլ ոչ ինքն իրեն՝ «ըստ ինքեան»։ Մինչդեռ ապացուցական սիլլոգիզմում է միայն, որ եզրակացությունն ինքն իրեն («ըստ ինքեան») անհրաժեշտաբար բխում է նախադրյալներից։

Սիլլոգիզմի արիստոտելյան սահմանումը ավարտվում է «զնոյնն զոլ» բառերով, որոնց նշանակությունն այդ սահմանման համար նույնպես դառնում է Դավիթ Անհաղթի մեկնաբանման նյութը։ Հայ հեղինակի բացատրությամբ՝ Արիստոտելն այդ բառերով ընդգծել է այն դրույթը, թե սիլլոգիզմի եզրակացությունը հենվում է նախադրյալների վրա, բխում է դրանցից և չկա սիլլոգիզմից դուրս մի սահմանում, որի վրա նույնպես հարկ լինի հենվել սիլլոգիզմի եզրակացությունը բխեցնելու համար կամ որը պակասի սիլլոգիզմի կազմում։ Այսպես, օրինակ, հոգին (— անձն) ինքնաշարժ է, ինքնաշարժը մշտաշարժ է, մշտաշարժն անմահ է, ապա ուրեմն հոգին անմահ է։ Այս դեպքում եզրակացությունը չի բխում առաջին երկու նախագրյալներից։ Նման եզրակացություն ստանալու համար անհրաժեշտ էր լրացուցիչ գիտելիք՝ «մշտաշարժն անմահ է», որը դուրս է մնում սիլլոգիզմի կազմից։ Այս խնդիրը Դավիթ Անհաղթը լուսաբանում է մեկ այլ օրինակով. հոգին (= անձն) ինքնաշարժ է, ինքնաշարժը մշտաշարժն է, մշտաշարժն անմահ է, ապա ուրեմն անձն ինքնաշարժ է։ Իսկ այս դեպքում ավելորդ է նախադրյալներից մեկը (էջ 108)։

Դավիթ Անհաղթը նման ոչ ճիշտ («անճարաբար») կազմած սիլլոգիզմներ է անվանում ստոիկյան մտահանգումները։ Օրինակ. առաջինը հավասար է երկրորդին, երկրորդը հավասար է երրորդին, ուրեմն առաջինը հավասար է երրորդին։ Կամ՝ առաջինը մեծ է երկրորդից, իսկ երկրորդը մեծ է երրորդից, ապա առաջինը, երկրորդը մեծ են երրորդից։ Այս մտահանգումների սխալը Դավիթ Անհաղթը տեսնում է այն բանում, որ օգտագործված է երկու փոքր նախադրյալ, մինչդեռ մեծ նախադրյալը բաց է թողնված։ Առաջին օրինակը Դավիթ Անհաղթի բացատրմամբ ճիշտ կլիներ կազմել հետևյալ կերպ. առաջինը հավասար է երկրորդին և երկրորդը հավասար է երրորդին, իսկ եթե առարկաները հավասար են միևնույն առարկային, հավասար են միմյանց, ապա և առաջինը հավասար է երրորդին։ Ժամանակս, առաջինը մեծ է երկրորդից, երկրորդը մեծ է երրորդից, իսկ այն ինչ. մեծից մեծ է, զգալի մեծ է փոքրից, հետևաբար առաջինը և երկրորդը մեծ են երրորդից։

Մտահանգումների այս ձևերը Դավիթ Անհաղթը համարում է կանոնավոր. «Այս է և ճարաբար եղերիլն» (էջ 108)։ Միևնույն ժամանակ նա ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ հարաբերության մասին մտահանգումներով (ինչպիսիք քննարկվող օրինակներն էին), եզրակացության բխեցման օրինականությունը պայմանավորված է հարաբերության բնույթով։ Այս կարևոր դրույթը, որը ցույց է տալիս բովանդակային վերլուծության անհրաժեշտությունը ձևական տրամաբանությունում, Դավիթ Անհաղթը լուսաբանում է հետևյալ օրինակով. «...Այս անուն նորա եղբայր, և այս անուն նորա եղբայր, ապա այս անուն և այս անուն եղբայրք զոն միմեանց» (էջ 108—110)։ Հայ տրամաբանը սա համարում է սուտ եզրակացություն («սուտ բաղեզերումն», էջ 110)։ Ասածը նա հիմնավորում է հետևյալ

կերպ. Հնարավոր է, որ երկու անձնավորություններ լինեն երրորդ անձնավորության հղբայրները, բայց միմյանց եղբայր չլինեն։ Այսպես, մի ոմն, որդի ունենալով մի կնոջից, կարող է ամուսնանալ մեկ այլ կնոջ հետ, որը որդի ունենա մեկ այլ ամուսնուց։ Այս ամուսնությունից ծնված տղայի եղբայրը կլինեն և՛ հոր որդին, և՛ մոր որդին, սակայն վերջիններս եղբայրներ չեն լինի։

Արիստոտելի կարևորագույն աշխատություններից մեկի՝ «Առաջին անալիտիկայի» քննարկվող հատվածի տեքստային բառ առ բառ վերլուծությունը V—VI դդ. տրամաբանի կողմից անշուշտ կարող է օգնել տրամաբանության իրական ընթացքի գիտական վերիմաստավորմանը։ Բանն այն է, որ երբ գիտում ենք Արիստոտելի տրամաբանական ուսմունքի վերլուծությանը, կարևորագույն նշանակություն է ստանում ամեն մի իմաստային երանգ, մինչև Ստագիրյտի այդ աշխատությունները, ինչպես նշում է Ի. Բոչենսկին, առաջադրում են դրանց գրական պատմության բազմաթիվ պրոբլեմներ, որոնք դեռևս մասնակիորեն են լուծված[20]։ Չի կարելի չհամաձայնել Ի. Բոչենսկու հետ, որ Արիստոտելի տրամաբանական ուսմունքի զարգացման ադեկվատ ըմբռնումը ծայրահեղ կարևոր նշանակություն ունի տրամաբանության պատմության պրոբլեմները դնահատելու տեսանկյունից։ Այս առթիվ քննարկենք մի հարց։ Հետազոտելով Արիստոտելի տրամաբանական ուսմունքը, լեհ տրամաբան Յա. Լուկասևիչը (1878—1956) հանգել է այն եզրակացության, որ արմատական տարբերություն կա արիստոտելյան և ավանդական սիլլոգիզմների միջև։ Այդ դրսևորվում է երկակի. նախ արիստոտելյան սիլլոգիզմում բացակայում է եզակի նախադրյալը (ի տարբերություն ավանդական սիլլոգիզմի) և երկրորդ, Արիստոտելի մոտ սիլլոգիզմը իմպլիկացիա է, որը բաղկացած է նախադրյալների կոնյունկցիայից (նախորդող անդամ) և եզրակացությունից (հաջորդող անդամ)։ Մինչդեռ ավանդական սիլլոգիզմը ձևակերպվում է որպես եզրահանգում՝ երկու ճշմարիտ համարվող նախադրյալներից բխեցվում է եզրակացություն։ Այսպիսի ձևի համար Յա. Լուկասևիչը բնորոշ է համարում «հետևաբար» (կամ վերջինիս համապատասխան հոմանիշ) բառը։ Նա պնդում է նաև, որ ոչ մի սիլլոգիզմ Արիստոտելի մոտ սկզբնապես ձևակերպված չէ որպես այդպիսին[21]։ Ըստ նրա մեկնաբանության, մինչև Ալեքսանդրը տրամաբանական գրականության մեջ սիլլոգիզմը միշտ էլ իմպլիկացիայի ձևով է գրանցվել, և Ալեքսանդրն է, հավանաբար, ստոիկների ազդեցության տակ, սիլլոգիզմը իմպլիկացիայի ձևից վերածել արտածման ձևի։ Արիստոտելյան և ավանդական սիլլոգիզմի միջև տարբերությունը Յա. Լուկասևիչը արմատական է համարում։ Նրա մեկնաբանմամբ՝ արիստոտելյան սիլլոգիզմը որպես իմպլիկացիա նախադասություն (=դատողություն) է և որպես այդպիսին այն պետք է լինի կա՛մ ճշմարիտ, կա՛մ սխալ։ Մինչդեռ ավանդական սիլլոգիզմը նախադասություն (=դատողություն) չէ, այն բաղկացած է մի քանի նախադասություններից, որոնցից երկուսն արտահայտում են նախադրյալներ, որոնք իրար հետ ոչ մի կերպ զուգակցված չեն, իսկ կապն այդ նախադրյալների և եզրակացության

---

[20] I. M. Bohenski, A. History of Formal Logic, էջ 40։

[21] Я. Лукасевич, Аристотелевская силлогистика с точки зрения современной формальной логики, М., 1959, էջ 33—36, 58։

հետ «հետևաբար» բառի միջոցով չի հանգեցնում նոր բարդ նախադասության (=դատողության)[22]։

Յա. Լուկասևիչը հիշատակում է Սեքստ Էմպիրիկին, որը խոսելով կատեգորիկ սիլլոգիզմների մասին, դրանք անվանում է «պերիպատետիկական» («ճեմական») սիլլոգիզմներ։ Այդ առթիվ Յա. Լուկասևիչը նկատում է, թե պերիպատետիկական սիլլոգիզմն անպայման արիստոտելյան սիլլոգիզմ չէ։

Արիստոտելի «Անալիտիկայի» որոշ հատվածների տեքստային վերլուծությունը Դավիթ Անհաղթի կողմից հիմք է տալիս այլ ենթադրությունների հանգել, քան Յա. Լուկասևիչի եզրակացություններն են։ Նախ, կարևոր է ընդգծել, որ Դավիթ Անհաղթը հատկապես նշում է, թե Արիստոտելը տվել է սիլլոգիզմի սահմանումն ընդհանրապես և ոչ թե կատեգորիկ կամ պայմանական սիլլոգիզմի սահմանումը (էջ 92)։ Այդ տեսակետից Դավիթ Անհաղթը չի համաձայնում Ալեքսանդրի հետ («Իսկ Աղէքսանդրոս առյարակայիցս պատմիչ բանից, ասէ՝ թէ զստորոգականն միայն սահմանէ հաւաքաբանութիւն...»[23]), այնպես ինչպես հետագայում Յա. Լուկասևիչը չի համաձայնում Ալեքսանդրի հետ, ինչպես և՝ Սեքստ Էմպիրիկի հետ։ Սակայն Դավիթ Անհաղթի գրությը էլ ավելի կարևոր է այն իմաստով, որ Ալեքսանդրի հետ նրա անհամաձայնությունից չի բխում, թե սիլլոգիզմի արիստոտելյան սահմանումը տարածվում է միայն պայմանական սիլլոգիզմի վրա, որի ձևը որոշակի մեկնաբանման դեպքում կարելի է հանգեցնել իմպլիկացիայի։

Հատկանշական են այն օրինակները, որոնցով Դավիթ Անհաղթը լուսաբանում է սիլլոգիզմի արիստոտելյան սահմանումը։ Ահա դրանցից մի քանիսը. (1) «...Մարդ կենդանի, կենդանին՝ գոյացութիւն, ապա ուրեմն մարդ գոյացութիւն»։ (2) «Սոկրատէս թռչի. և որ թռչի, թևս ունի. ապա ուրեմն և Սոկրատէս թևս ունի»։ Այս օրինակներից առաջինը կատեգորիկ սիլլոգիզմ է։ երկրորդը՝ պայմանական մտահանգում, սակայն երկուսի կառուցվածքն էլ այնպիսին է, որ դրանք չեն համապատասխանում արիստոտելյան սիլլոգիզմի Յա. Լուկասևիչի մեկնաբանմանը։ Յա. Լուկասևիչի տեսակետից դրանք ավանդական սիլլոգիզմներ են, բայց ոչ արիստոտելյան։ Թերևս կարելի էր ենթադրել, թե Դավիթ Անհաղթն Արիստոտելին այս հարցում մեկնաբանում է ստոիկների ազդեցության տակ։ Նման ենթադրությանը որպես հիմք կարող էր ծառայել Յա. Լուկասևիչի այն դրությը, թե արիստոտելյան սիլլոգիզմների ձևափոխումը իմպլիկացիայի ձևից եզրահանգման ձևի պայմանավորված է. հավանաբար, ստոիկների ազդեցությամբ։ Բայց այսպիսի ենթադրությունը բացարձակապես բացառվում է ոչ միայն ստոիկների նկատմամբ Դավիթ Անհաղթի ընդհանրապես բացասական վերաբերմունքի պատճառով, այլ նաև այն պատճառով, որ Դավիթ Անհաղթը առիթը բաց չի թողնում քննադատելու ստոիկներին՝ մասնավորապես մտահանգումների հարցում. («Այսպիսիք են և առ ի ստոյիկեանցն անճարաբար եզերեալք բաղահաւաքմունքն», էջ 108)։

Արիստոտելյան սիլլոգիստիկայի Դավիթ Անհաղթի մեկնաբանումը կասկածի տակ է դնում Յա. Լուկասևիչի եզրակացությունները արիստոտելյան սիլլոգիզմի իսկական ձևի մասին։ Անել անվերապահ պնդումներ այս

---

22 Նույն տեղում, էջ 58—59։

23 Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 204ա, հմմտ. ձեռ. № 1763, էջ 175բ։

խնդրում՝ սխալ կլիներ այն պատճառով, որ ինչպես Արիստոտելի տրամաբանական գործերը, այնպես էլ Դավիթ Անհաղթի համապատասխան մեկնությունները կարող էին այնպիսի փոփոխման ու խմբագրման ենթարկվել հետագա վերարտագրումների ընթացքում, որ ինչ-որ չափով հեռանային հեղինակների մտահղացումների խիստ ստույգ արտահայտություններից։ Մինչդեռ մտքի ամեն մի երանդ, ամեն մի բառ տվյալ դեպքում շատ կարևոր նշանակություն ունի։ Սակայն բոլոր դեպքերում Արիստոտելի տրամաբանական ուսմունքի՝ Դավիթ Անհաղթի մեկնաբանությունները, լինելով հնագույն աշխատություններից, չեն կարող լույս չսփռել տրամաբանության պատմության դեռևս լուծման կարոտ խնդիրների վրա։

Հետևելով Արիստոտելին, Դավիթ Անհաղթը տարբերակում է ավարտուն (կատարյալ) և անավարտ (ոչ-կատարյալ) սիլլոգիզմները։ «Բայց աւարտուն կոչեմ բաղհաւաքումն ղոչինչ արտաքուստ սահմանումն առ կարօտացեալն առ ի լինել բաղեզերումն» (էջ 110)։ Հայտնի է, որ արիստոտելյան սահմանման համաձայն կատարյալ համարվում է այն սիլլոգիզմը, որի եզրակացության անհրաժեշտորեն բխեցման համար կարիք չկա դիմելու տվյալ սիլլոգիզմի նախադրյալներից բացի այլ դիտելիքի[24]։ Դավիթ Անհաղթն այս կապակցությամբ քննարկում է այն տարաձայնությունը, որ ծագել էր Մաքսիմոս Ուռհայեցու և Թեմիստոսի միջև։ Վերջինս կատարյալ էր համարում առաջին ձևի սիլլոգիզմները, իսկ երկրորդ և երրորդ ձևի սիլլոգիզմները համարում էր ոչ-կատարյալ։ Իսկ Մաքսիմոսը գտնում էր, որ այն բոլոր սիլլոգիզմները, որոնք կարիք չունեն լրացուցիչ տերմինի, կատարյալ են. «Իսկ Մաքսիմոս ուշ ունելով սահմանումն ունողումն զանկարօտն զամենայն բաղհաւաքումն աւարտուն կոչէր» (էջ 112)։ Դավիթ Անհաղթը նշում է, որ նրանց վեճը, որպես դատավոր, լուծեց Հուլիանոս թագավորը, որը հաղթող ճանաչեց Մաքսիմոսին։

Դավիթ Անհաղթը որոշ փաստարկներ է առաջադրում «պարտվածի» օգտին։ Մեկնաբանելով Թեմիստոսի դրույթը, Դավիթ Անհաղթը նկատում է, թե ինքը ոչ-կատարյալ այն սիլլոգիզմը չի համարում, որը ամեն կերպ կարիք ունի («բնաւ կարօտանայ») արտաքին տերմինի, այսինքն սիլլոգիզմի առկա կազմում բացակա որևէ տերմինի։ Մենք գործ չենք ունենա սիլլոգիզմի հետ այն դեպքում, եթե դիմում ենք այլ տերմինի, ինչպես նաև երբ տերմինի տեղերը փոխում ենք շրջման միջոցով և կամ դիմում ենք անթույլատրելի եզրահանգման։ Նա ոչ-կատարյալ սիլլոգիզմ է համարում այն սիլլոգիզմը, որը դիմում է արտաքին տերմինին՝ անհրաժեշտի արտահայտման («ի արծարծումն հարկաւորին») նպատակով և ոչ թե լրացման կամ սիլլոգիզմի նախադրյալի շրջման և կամ անթույլատրելի եզրահանգման նպատակով։ Ըստ էության Թեմիստոսի դիրքորոշումը Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ համապատասխանում է Արիստոտելի մտահղացմանը, ոչ միայն այն պատճառով, որ Արիստոտելն ինքը պարզորոշ նշում է, որ կատարյալ են առաջին

[24] «Совершенным я называю силлогизм, который для выявления необходимости не нуждается ни в чем другом, кроме того, что принято, несовершенным же—силлогизм, который нуждается [для этого] в чем-то одном или многом, что хотя и необходимо через данные термины, но через [данные] посылки не получено» (Аристотель, Соч., т. 2, էջ 120)։

ձևի սիլլոգիզմները[25], այլ նաև այն պատճառով, որ կատարյալ սիլլոգիզմում, նրա մտահղացման համաձայն, եզրակացության անհրաժեշտությունը բացահայտ է, արտահայտված է, մինչդեռ ոչ-կատարյալ սիլլոգիզմում է, որ արտաքին տերմինի օգնությամբ փորձում ենք այդ անհրաժեշտությունը դարձնել բացահայտ։

Սիլլոգիզմի մասին արիստոտելյան ուսմունքի բաղադրիչ մասը Դավիթ Անհաղթը համարում է դատողության հակադարձումը (էջ 118)։ Վերջինիս մեկնաբանումը Դավիթ Անհաղթի կողմից ցույց է տալիս, որ «հակադարձություն» ասելով նա նկատի ունի մտքի այն ձևերը, որոնք տրամաբանության պատմության մեջ հայտնի են որպես անմիջական մտահանգումներ։ Դավիթ Անհաղթն ըստ էության բացատրում է նաև այն, թե ինչու դատողության հակադարձումը պետք է համարել սիլլոգիզմի ուսմունքի բաղկացուցիչ մասը։ Դա այն պատճառով, որ դատողության հակադարձման միջոցով ենք սիլլոգիզմի երկրորդ և երրորդ ձևերը հանգեցնում առաջին ձևին։

Դավիթ Անհաղթը նշում է, որ հակադարձության մասին արիստոտելյան ուսմունքում հակադարձության պրոբլեմի մի շարք տեսանկյուններից (այդ տեսանկյունները նա համարում է ութը) քննարկված են երեք խնդիր՝ սահմանման, հարաբերության մասին դատողության և սիլլոգիզմի նախադրյալի հակադարձության հարցը։ Հայ հեղինակը նշում է սիլլոգիզմի նախադրյալի հակադարձության երեք եղանակ. ա) պարզ. տեղի է ունենում այն դեպքում, երբ դատողության տերմինների տեղափոխությունից դատողության որակը չի փոխվում։ Օրինակ, «ոչ մի մարդ քար չէ» դատողության հակադարձման հետևանքով ստացվում է «ոչ մի քար մարդ չէ» դատողությունը։ Հակադարձման այս եղանակին Դավիթ Անհաղթը տալիս է հետևյալ բացատրությունը. «Որակն նոյն մնաց, քանզի երկոքին բացասականք. իսկ կարդ սահմանացն փոխեցաւ միայն. քանզի ստորոգեցեալն ենթակայ եղև, և ենթակայն ստորոգեցեալ» (էջ 122)։

Նկատենք, որ տրամաբանության պատմության մեջ հետագայում անմիջական մտահանգման այս ձևն անվանվել է շրջում (conversio) և համարվել է պարզ այն դեպքում, երբ շրջման հետևանքով չի փոխվել դատողության քանակը։

բ) Հնարավոր (—մարթելի) հակադարձություն Դավիթ Անհաղթը համարում է այն անմիջական մտահանգումը, երբ դատողությունը փոխում է իր որակը, իսկ տերմինների տեղերը մնում են նույնը։ Հայ հեղինակի մեկնաբանմամբ այդ հնարավորությունը վերաբերում է դատողության նյութին։ Օրինակ, «մարթելի գոյ ամենայնում մարգում արդար գոլ, որ է ստորասութիւն և դարձեալ մարթելի գոյ՝ ոչ ումեք մարգում արդար գոլ. որ է բացասութիւն» (էջ 124)։ Այս դեպքում հաստատական դատողությունը վերածվեց ժխտականի։ Փոխվեց դատողության որակը, սակայն նույնը մնաց դատողության տերմինների կարգը։ Այլ կերպ ասած՝ դատողության մատերիան մնաց նույնը։ Առաջին հայացքից կարող էր թվալ, թե հակադարձության այս եղանակը համապատասխանում է այն անմիջական մտահանգմանը, որը ավանդական ձևական տրամաբանությունից հայտնի է որպես փոխակերպում (obversio)։ Սակայն Դավիթ Անհաղթի նկարագրած դեպքը մի կարևոր

25 Նույն տեղում, էջ 126, 165, 166, հմմտ. А. С. Ахманов, Логическое учение Аристотеля, էջ 196։

յնդրում տարբերվում է փոխակերպումից։ Դատողության փոխակերպման դեպքում սուբյեկտը մնում է նույնը, իսկ պրեդիկատը վերածվում է իր հակասող հասկացությանը։ Մինչդեռ Դավիթ Անհաղթի օրինակում ինչպես սուբյեկտը, այնպես էլ պրեդիկատը մնացել են նույնը։ Այս դեպքում, իհարկե, «մարթելի հակադարձությունը» չի կարող բնութագրվել ոչ միայն որպես փոխակերպում, այլև ընդհանրապես որպես անմիջական մտահանգման ձև, քանի որ անմիջական մտահանգման դեպքում եզրակացությունը ճշգրտում է նախադրյալի իմաստը և ոչ թե արմատապես նոր գիտելիք է հաղորդում, ինչպես այդ տեղի ունի Դավիթ Անհաղթի ներկայացրած օրինակում։

Կարելի է ենթադրել, թե Դավիթ Անհաղթի աշխատասիրության սկզբնական ձեռագրերում քննարկվող օրինակն ունեցել է հետևյալ ձևակերպումը. «Ամենայնում մարդում արդար գոլ» և «Ոչ ումեք մարդում [ոչ] արդար գոլ»։ Այդ դեպքում՝ երկրորդ դատողության ժխտական բնույթն ակնհայտ կլիներ նաև ըստ տրամաբանական ձևի։ Սակայն հիշատակվող աշխատության ձեռագրերում [ոչ] մասնիկը բացակայում է[26]։

Հնարավոր հակադարձության առթիվ Դավիթ Անհաղթը քննարկում է ոմանց հետևյալ առարկությունը. ինչո՞ւ հաստատական դատողության ժխտումը վերածվում է հնարավորության ժխտական դատողության այն դեպքում, երբ հաստատական պայմանական դատողության ժխտումը չի պահանջում այն փոխակերպել հնարավորության ժխտական դատողության։ Եթե նախադրյալը պայմանական է, ապա պետք է ասել. եթե անհնարին է, որ յուրաքանչյուր մարդ արդար է... (էջ 124)։ Խնդրի լուծումը Դավիթ Անհաղթը տեսնում է հետևյալում. այդ նախադրյալը համազոր է այն դատողությանը, որ ձևակերպվում է հետևյալ կերպ. ոչ անհրաժեշտ է (=ոչ հարկավոր), որ յուրաքանչյուր մարդ լինի արդար, քանի որ հնարավոր է, որ ոչ մի մարդ չլինի արդար (էջ 124)։

գ) Բաղհակադարձությունը հակադարձության այն տեսակն է, երբ փոխվում է դատողության և՛ որակը, և՛ տերմինների կարգը։ Ահա այս հակադարձության լուսաբանումը Դավիթ Անհաղթի օրինակով. եթե մարդ է, այն կենդանի է. եթե կենդանի չէ, ապա մարդ չէ։ Այս մտահանգումն ավանդական ձևական տրամաբանությունում հայտնի է որպես պայմանական դատողության հակադրում (contrapositio) և ժամանակակից գրականությունում արտահայտվում է հետևյալ բանաձևով. $(A \rightarrow B) \rightarrow (\bar{B} \rightarrow \bar{A})$:

Դավիթ Անհաղթը քննարկում է այն հարցը, թե ինչու Արիստոտելը չի հետազոտել հնարավորի («կարելւոյն») և անհնարինի («անկարելւոյն») հակադարձելիության հարցը։ Առաջինի կապակցությամբ Դավիթ Անհաղթը նշում է, թե այն «զկարելւոյն եթող, որպէս պարունակեցեալս յայնցանեաց, որք մարթին զոլ» (էջ 134)։ Իսկ անհնարինի հակադարձության հարցը Արիստոտելը չի քննարկել, քանի որ, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, անհնարինը հակադարձված ձևով նույնանում է անհրաժեշտին («հարկաւորին»), անհրաժեշտ բնույթի նախադրյալին և դա տեղի է ունենում բացասման բացասման միջոցով. «իսկ զանկարելին եթող, վասն զի հակադարձի նոյնք գոն

26 Հմմտ. «Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 210ա, № 1763, էջ 191բ, № 1686, էջ 261բ, № 1764, էջ 88բ։ Տե՛ս նաև «Մատենագրութիւնք նախնեաց. Կորիւն, Մամրէ, Դաւիթ», Վենետիկ, 1883, էջ 591։

հարկաւորին առաջարկութեանցն, և բացասութիւնք բացասութեանց» (էջ 134)։

Դավիթ Անհաղթը քննարկում է հակադարձության իմացական նշանակությունը և եզրակացնում, որ այդ եղանակի նպատակը գիտելիք ստանալն է. «...եթէ ո՞յք ոմանք են՝ որք ցուցանին ի ձեռն հակադարձութեանցն։ Եւ ասեմք. եթէ գիտելն...» (էջ 134)։ Նա նշում է, թե ինչ եզրակացություններ են ստացվում դատողությունների շրջումից. ընդհանուր ժխտական-դատողության շրջումից առաջանում է դարձյալ ընդհանուր-ժխտական, ընդհանուր-հաստատական դատողությունը վերածվում է մասնավոր-հաստատականի, մասնավոր-հաստատական դատողությունից ստացվում է դարձյալ մասնավոր հաստատական դատողություն։ Նշելով հայտնի տրամաբանական եղելությունն այն մասին, որ մասնավոր-ժխտական դատողությունը շրջման ենթակա չէ, Դավիթ Անհաղթը բացատրում է այդ փաստի պատճառը։ Նա նկատում է, որ եթե փորձենք շրջել մասնավոր-ժխտական դատողությունը, ապա կստացվի մի դատողություն, որի մասին չենք կարող ոչ պնդել, թե այն ճշմարիտ է և ոչ էլ պնդել, թե այն սխալ է։ Այն Դավիթ Անհաղթի խոսքերով ասած «ոչ ճշմարտակցէ, և ոչ ստակցէ. և ոչ է հակադարձութիւն» (էջ 134)։ Ընդ որում, Դավիթ Անհաղթն ընդգծում է մի կարևոր միտք, որն իր թարմությունը պահպանում է նաև մեր օրերում և որի վրա, ցավոք սրտի ուշադրություն չեն դարձնում։ Խոսքը վերաբերում է այն բանին, որ երբ Դավիթ Անհաղթը նշում է, թե մասնավոր-ժխտական դատողությունը շրջման ենթակա չէ, նա նկատի ունի այն, ինչ հատուկ է և ինչ անհրաժեշտաբար հատուկ է. «Այսոքիկ ի վերայ զոլոյն և հարկաւոր յեղանակին՝ այդպես ունին, որպէս ասացաւք» (էջ 134—136)։ Մինչդեռ հնարավորության մոդալականության սահմաններում Դավիթ Անհաղթն ընդունում է նաև մասնավոր-ժխտական դատողության շրջումը. «Բայց մասնական բացասութիւն՝ որ երբեմն ոչ հակադարձիւր ի վերայ զոլոյն և հարկաւոր յեղանակին, այժմ ի վերայ մարթին հակադարձի. որգոն՝ ոչ ամենայն մարդ գնայ, և ոչ ամենայն գնայն մարդ» (էջ 136)։

Ելնելով դատողությունների արիստոտելյան դասակարգումից, Դավիթ Անհաղթը քննարկում է դրանց շրջելիության հերթականության հարցը։ Համեմատելով իրար հետ դատողություններն ըստ մոդալականության, Դավիթ Անհաղթը նշում է, որ Արիստոտելը նախ քննել է իրականության դատողության, ապա անհրաժեշտության և հնարավորության դատողությունների շրջելիության հարցը, քանի որ առաջինն առանց եղանակի, իսկ վերջիններս ըստ եղանակի են։

Անհրաժեշտության դատողության շրջելիությունը քննարկված է հնարավորության դատողության շրջելիությունից առաջ, քանի որ այն, ինչ հատուկ է այդ դատողությանը, նույն ձևով մնում է նաև հակադարձումից (=տվյալ դեպքում՝ շրջումից) հետո. «իսկ զհարկաւորն քան զմարթն. վասն զի միշտ և նոյնպէս ունի ըստ հակադարձութեանցն զոլումն» (էջ 136)։

Ընդհանուր-ժխտական դատողության շրջման հարցը քննարկվում է ավելի վաղ, քան ընդհանուր-հաստատական դատողության հարցը ոչ միայն այն պատճառով, որ այն ենթակա է պարզ շրջման («ոչ միայն զի հակադարձի, և առ ինքն հակադարձի» (էջ 136), այլև այն պատճառով, որ ընդհանուր-ժխտական դատողության շրջելիությունը գլիտանի է (կամ պետք է զալիս) այլ դատողությունների շրջելիության համար։ Ընդհանուր-հաստատական դատողության շրջելիության հարցը քննարկվում է մասնավոր-հաստատական

դատողության շրջելիության հարցից առաջ ոչ այն պատճառով, որ առաջինը պարզ է շրջվում («ոչ որպէս առ ինքն հակադարձելով», (էջ 138), քանի որ դա այդպես չէ (ինչպես հայտնի է թե A և թե I դատողությունները շրջվում են սահմանափակումով), այլ միայն այն պատճառով, որ Արիստոտելն առաջնությունը տվել է ընդհանուրին՝ մասնավորի համեմատությամբ։ Իսկ մասնավոր-հաստատական դատողության շրջումը քննարկվում է մասնավոր-ժխտական դատողության շրջումից առաջ, քանի որ վերջինս ամենևին էլ շրջելի չէ իրականության և անհրաժեշտության մոդալականության տեսանկյունից («վասն զի մասնական բացասութիւն ամենևին ոչ հակադարձի ի վերայ դոլոյն և հարկաւոր յեղանակին», էջ 138)։

Դավիթ Անհաղթը քննարկում է նաև այն առարկությունները, որոնք ուղղված են դատողությունների շրջման արիստոտելյան մեկնաբանությունների դեմ։ Մի շարք օրինակներով ոմանք փորձել են կասկածի տակ դնել ընդհանուր-ժիտական դատողության պարզ շրջելիության հնարավորությունը։ Դավիթ Անհաղթն այս առթիվ քննարկում է երեք օրինակ. «եթե ոչ մի դդում չի կտրում դանակը, ապա ոչ մի դանակ չի կտրում դդումը», «եթե ոչ մի պատնեշ ցցի վրա չէ, ապա ոչ մի ցից պատնեշի վրա չէ», «եթե ոչ մի կարաս գինու մեջ չէ, ապա ոչ մի գինի կարասի մեջ չէ»։ Երեք դեպքում էլ շրջման հետևանքով ստացված դատողությունները ճշմարիտ չեն, մինչդեռ շրջումը, եթե այն կանոնավոր է, պետք է հանգեցնի ճշմարիտ եզրահանգման։ Դավիթ Անհաղթը նկատում է, որ քննարկվող դեպքերը տեղի են տալիս երեք տարակուսանքների։ Դրանցից առաջինի լուծումը նա տեսնում է այն բանում, որ քննարկվող դատողություններում ստորոգումն ամբողջությամբ չի իրականացված («ոչ է ողջաբար բոլոր ստորոգիցելոյն», էջ 138)։ Հայ հեղինակի մեկնաբանմամբ, կանոնավոր շրջման դեպքում կստացվեր հետևյալ պատկերը. «եթե ոչ մի դդում չի կտրում դանակը, ապա ոչ մի բան, որ կտրում է դանակը, դդում չէ, այլ խարտոց է և կամ նման մի այլ բան». «եթե ոչ մի պատնեշ ցցի վրա չէ, ապա այն, ինչ ցցի վրա է, պատ չէ, այլ չվան է կամ պարան», «եթե ոչ մի կարաս գինու մեջ չէ, ապա այն, ինչ գինու մեջ է, կարաս չէ, այլ կուտ (հատիճ) է և կամ խաղողի կեղև (թին) է»։ Ըստ էության այս բոլոր քննարկվող դեպքերում մենք գործ ունենք հարաբերության դատողությունների հետ։ Առաջին դեպքում խոսքը վերաբերում է «կտրելու» հարաբերությանը դանակի և դդումի միջև, երկրորդ դեպքում՝ «վրան գտնվելու» հարաբերությանը պատի ու ցցի միջև և երրորդ դեպքում՝ «մեջը գտնվելու» հարաբերությանը կարասի ու գինու միջև։ Քանի որ այդ հարաբերությունները քննարկվող կոնտեքստում ընկալվում են որպես ապահամաչափ (ապասիմետրիկ) հարաբերություն, ապա ակնհայտ է, որ չի կարելի փոխել այդ հարաբերություններով շաղկապված առարկաների տեղերը։ Այլ կերպ ասած, aRb դատողության դեպքում եթե R հարաբերությունը ապահամաչափ է, ապա չենք կարող շրջման հետևանքով ստանալ bRa։

Այս հարցը լուծելու համար Դավիթ Անհաղթը դիմում է այլ միջոցի։ Հարաբերության մասին դատողությունները նա դիտարկում է որպես հատկության գաստողություններ, որոնք, որոշ իմաստով արհեստական բնույթ ստանալով, միևնույն ժամանակ օգնում են այնպես շրջելու դատողությունները, որ ստացված եզրակացությունները ճշմարիտ լինեն։ Հիրավի, երբ «եթե ոչ մի դդում չի կտրում դանակը, ապա ոչ մի դանակ չի կտրում դդումը» անմիջա-

կան մտահանգումը շրջման միջոցով Դավիթ Անհաղթը մեկնաբանում է որպես «եթե ոչ մի գդում չի կտրում դանակը, ապա ոչ մի բան, որ կտրում է դանակը, գդում չէ», դրանով իսկ «ոչ մի գդում չի կտրում դանակը» դատողությունը նա դիտարկում է որպես հետևյալ հատկության դատողությունը. «ոչ մի գդում չի պատկանում կտրող դանակների դասին»։ Իսկ այս ընդհանուր-ժխտական հատկության դատողության շրջումից ստացվում է հետևյալ ընդհանուր-ժխտական դատողությունը, որը ճշմարտացի է. «Կտրող դանակներից ոչ մեկը չի պատկանում գդումների դասին»։ Նույն ձևով է լուծվում նաև մյուս երկու օրինակների հարցը։

Հետևյալ տարակուսանքը, որ Դավիթ Անհաղթի կարծիքով առաջանում է ընդհանուր-ժխտական դատողության շրջման կապակցությամբ, պայմանավորված է այս օրինակի բնույթով. «քանի որ ոչ կենդանին մարդ չէ, ապա ոչ մարդը կենդանի չէ» («...Եթէ վասն զի ոչ կենդանին՝ ոչ մարդ, ոչ մարդն՝ ոչ կենդանի»)։ Բայց չէ՞ որ, ոչ մարդը կարող է լինել այլ կենդանի՝ ձի կամ եզն (էջ 138)։ Մեկ այլ տարակուսանք, որ առաջանում է հետևյալ օրինակի կապակցությամբ. «քանի որ ոչ մի գոյացություն չի գտնվում սպիտակության մեջ, ուստի և ոչ մի սպիտակություն չի գտնվում գոյացության մեջ»։ Սակայն հարց է ծագում, ինչի՞ն պետք է ստորոգել սպիտակությունը, որի՞ն պետք է ենթակայեցնել, եթե ոչ գոյացությանը։

Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ տարակուսանք է առաջանում նաև այն դեպքում, երբ հետևյալ ձևով են մտահանգում. «այն ինչ չի գտնվում, տվյալ տեղում չէ» («...Որ ոչ է ի տեղւոջ՝ ոչ կայ, և ոչ կացեալն՝ ոչ է ի տեղւոջ», էջ 140)։ Եվ այս առթիվ տարակուսում է ինքը՝ Դավիթ Անհաղթը. մի՞թե նման եզրակացությունը ճշմարիտ է. ինչպե՞ս մեկնաբանել քայլողի կամ գնացողի դեպքը։ Դավիթ Անհաղթն առաջարկում է նաև այդ տարակուսանքների լուծումը։ Այն դեպքում, երբ ժխտվում է սուբյեկտը (ենթական) և պրեդիկատը (ստորոգյալը), անհրաժեշտ է երկու ժխտումները հանդեցնել պրեդիկատի ժխտմանը։ «Որդոն՝ ոչ կենդանին՝ ոչ մարդ, իսկ ոչ մարդն՝ ոչ ոչ կենդանի»[27] շրջման մեջ Դավիթ Անհաղթի կարծիքով ժխտումները միմյանց բացառելով առաջացնում են հետևյալ արտահայտությունը («ստորասութիւն»)՝ «Ոչ ոչ կենդանի, այլ կենդանի» (էջ 140)։

Դատողության մեջ ժխտումների կերպարանափոխմամբ է Դավիթ Անհաղթը փորձում լուծել շարժման հակասական բնույթը, որ նա դարձրել է ըստ էության քննարկման նյութ ընդհանուր-ժխտական դատողության շրջման կապակցությամբ։ Այդ են վկայում Մատենադարանի № 8132, № 7151, № 1763, № 1686 և № 1764 ձեռագրերը, որոնցում նախասիս քննարկվող «Որ ոչ է ի տեղւոջ՝ ոչ կայ, և ոչ կացեալն՝ ոչ է ի տեղւոջ» անմիջական մտահանգման

---

27 Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 213բ։ Ս. Արևշատյանի «Համահավաք» տեքստում տվյալ նախադասության «ոչ ոչ կենդանի» հատվածում մեկ անգամ բաց է թողնված «ոչ» բառը, որը անհասկանալի է դարձնում Դավիթ Անհաղթի մտահղացումը։ Ճիշտ է, Մատենադարանի ձեռագրերում ևս հանդիպում ենք նման աղճատման (տե՛ս, օրինակ, ձեռ. № 1763, էջ 199ա, ձեռ. № 7151, էջ 92բ)։ Տվյալ դեպքում Ս. Արևշատյանը, հավանաբար, առաջնությունը տվել է № 7151 ձեռագրին։ Սակայն նախ, այդ դեպքում անհրաժեշտ էր տողատակում նշել № 8132 ձեռագրի տվյալ դեպքի տարբերակը և երկրորդ, որ էլ ավելի կարևոր է, ելնելով տեքստի բովանդակությունից, ճիշտը պետք է համարվեր վերջինս։

վերլուծությունը Դավիթ Անհաղթը հանգեցնում է հետևյալ ձևակերպմանը. «Որ ոչ է ի տեղւոջ, ոչ կայ, և որ ոչն կայ՝ ոչ ոչ ի տեղւոջ է»[28]։

Այլ է Դավիթ Անհաղթի մեթոդաբանական-տրամաբանական մոտեցումը «քանի որ ոչ մի գոյացություն չի գտնվում սպիտակության մեջ, ուստի և ոչ մի սպիտակություն չի գտնվում գոյացության մեջ» շրջման նկատմամբ։ Այս դեպքում եզրակացության սխալի պատճառը կոնկրետ-առարկայականի և վերացականի տարբերության անտեսումն է, մինչդեռ հատկության վերագրումը, տվյալ դեպքում, ինչպես բացատրում է Դավիթ Անհաղթը, երկակի է՝ ըստ բնության կոնկրետ-առարկայական, և բնազդաբար (վերացական)։ «...Ոչ մի գոյացութիւն յորակումն, այս արդէն իսկ սուտ. քանզի է յորակումն գոյացութիւն, թէպէտ և բնազանցաբար։ Քանզի երկակի է ստորոգութիւն, մին ըստ բնութեան, իսկ միւսն բնազանցաբար» (էջ 140)։ Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, ըստ բնության՝ երբ ընդհանուրը վերագրվում է մասնավորին և պատահական հատկությունները ստորոգվում են գոյացությանը, բնազանցաբար՝ երբ մասնավորն է վերագրվում ընդհանուրին և գոյացությունն է ստորոգվում պատահական հատկություններին։ Շրջման դեպքում կոնկրետի և վերացականի տարբերակման անհրաժեշտության մեջ չի կարելի չնկատել «տիպերի տեսության» սաղմերի առաջացումը։

Դավիթ Անհաղթը նշում է, որ ոմանք տարակուսում են նաև ընդհանուր-հաստատական դատողությունը մասնավոր-հաստատական դատողության շրջման առթիվ։ Այդ կապակցությամբ առաջադրվում են հետևյալ օրինակները. «եթէ վասն զի ամենայն որ կին դոյ՝ կոյս էր, և ոք կոյս գոլով՝ կին էր. և վասն զի ամենայն աւագ՝ մանուկ էր. և ոք մանուկ՝ աւագ էր» (էջ 140)։ Այս տարակուսանքի լուծումը Դավիթ Անհաղթը տեսնում է այն բանում, որ պրեդիկատը ճիշտ չէ կիրառված շրջման մեջ։ Հայ տրամաբանը գտնում է, որ նշված երկու դեպքերում ըստ էության մենք գործ կունենանք հետևյալ անմիջական մտահանգումների հետ. «Ամենայն կին կոյս էր. և ոք կոյս գոլով յառաջն՝ կին է. և ամենայն աւագ՝ մանուկ էր, և ոք մանուկ գոլով յառաջն՝ աւագ է» (էջ 140)։ Խնդրի լուծումը Դավիթ Անհաղթի մոտ կարելի է քննարկել տարբեր տեսանկյուններից և ցույց տալ, որ այն ոչ բոլոր պահանջներին է բավարարում։ Սակայն տվյալ դեպքում կարևորն այն է, որ հայ մտածողի մոտեցման մեջ նկատելի է «ժամանակային տրամաբանության» տարրերի առկայությունը, որոնք տրամաբանության պատմության հետագա ընթացքում ձևավորվեցին և վերածվեցին տրամաբանության գիտության մի ամբողջական բնագավառի։

Դավիթ Անհաղթը քննարկում է նաև այն տարակուսանքը, որ վերաբերում է մասնավոր-ժխտական դատողության շրջելիությանը։ Այդ տարակուսանքն արտահայտվել է, մասնավորապես, հետևյալ օրինակ-առարկությամբ. «ոչ ամեն մի կենդանի մարդ է» դատողության շրջումից կարելի է ստանալ «յուրաքանչյուր մարդ կենդանի է» դատողությունը (էջ 142)։ Նկատենք, որ «ոչ ամենայն կենդանի՝ մարդ» դատողությունը Դավիթ Անհաղթը մեկնաբա-

28 Մատենադարան, ձեռ. № 8182, էջ 213բ, ձեռ. № 7151, էջ 92բ, ձեռ. № 1763, էջ 199ա, ձեռ. № 1686, էջ 270ա, ձեռ. № 1764, էջ 91բ։ «Համահավաք» տեքստում Ս. Արևշատյանը գերապատվությունը ավել է «Որ ոչ է ի տեղւոջ, ոչ կայ, և որ ոչն կայ՝ ոչ ի տեղւոջ է» ձևակերպմանը (էջ 140), հմմտ. «Մատենագրութիւնք նախնեաց. Կորիւն, Մամբրէ, Դաւիթ», էջ 597, որտեղ անտեսված է կրկնակի ժխտման փաստը։

նում է որպես «որոշ կենդանիներ մարդ չեն»։ Այլապես խոսքը չի կարող վերաբերել մասնավոր-ժխտական դատողությանը։ Իհարկե, որոշակի բովանդակային գիտելիքների դեպքում, կարելի է պնդել, որ «յուրաքանչյուր մարդ կենդանի է»։ Սակայն այս դատողությունը չի կարող համարվել «որոշ կենդանիներ մարդ չեն» դատողության շրջման արդյունքը, քանի որ այն չի բխում շրջվող դատողության ձևից. այն ենթադրվում է այդ դատողության բովանդակության հիման վրա։ Մինչդեռ տրամաբանությունն ընդհանրապես, տրամաբանության ուսմունքը դատողությունների շրջման մասին, մասնավորապես, ելնում են ձևից, դատողության ձևից, իսկ այդ հանգամանքը հնարավորություն չի տալիս շրջելու մասնավոր-ժխտական դատողությունը։ Ինքը՝ Դավիթ Անհաղթը, քննարկվող հարցի լուծումը տեսնում է հետևյալում. «որոշ կենդանիներ մարդ չեն» դատողությունը չի կարելի շրջել «յուրաքանչյուր մարդ կենդանի է» դատողության, քանի որ պարզ հակադարձության կամ շրջման դեպքում տեղի է ունենում տերմինների, բայց ոչ դատողության որակի փոփոխում և չի կարելի ժխտական դատողությունը շրջել հաստատական դատողության (էջ 142)։

Դատողությունների հակադարձումը ինչպես Արիստոտելի, այնպես էլ Դավիթ Անհաղթի մոտ ինքնանպատակ չէ, այն ծառայում է սիլլոգիզմի տեսությանը, մասնավորապես հնարավորություն է տալիս ըմբռնելու սիլլոգիզմի հակադարձությունը։ Դա, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, տեղի է ունենում հետևյալ կերպ. փոփոխվում է սիլլոգիզմի եզրակացությունը այնպիսի դատողությունների միջոցով, որոնք հակադիր են եզրակացությանը, սիլլոգիզմի նախադրյալներից մեկը բացասվում է, մյուսը մնում է անփոփոխ[29] (էջ 118)։ Սիլլոգիզմի հակադարձությունը Դավիթ Անհաղթը լուսաբանում է հետևյալ օրինակով. մարդը կենդանի է, կենդանին՝ շնչավոր, ապա և՝ մարդը շնչավոր է։ Ենթադրենք թե որևէ մեկն առարկում է այդ եզրահանգման դեմ։ Այդ դեպքում նա կփորձի հերքել «մարդը շնչավոր է» եզրակացությունը, նախադրյալներից մեկը հանգեցնելով անհնարինության (—անկարելիին)։ Այդ կերպ հանգում ենք եզրակացության հակադեմ դատողության։ Այսպես, ունենք «ոչ մի մարդ շնչավոր չէ» դատողությունը և անփոփոխ ենք պահում նախադրյալներից մեկը՝ «յուրաքանչյուր մարդ կենդանի է»։ Դիմում ենք սիլլոգիզմի այն ձևին, որը Դավիթ Անհաղթը համարում է երկրորդ ձև. «ոչ մի մարդ շնչավոր չէ», «յուրաքանչյուր մարդ կենդանի է» նախադրյալներից բխում է մասնավոր ժխտական դատողության բնույթի եզրակացություն՝ «ոչ բոլոր կենդանիներն են շնչավոր» (էջ 118—120)։

Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ այս մտահանգման մեջ կարևորն այն միտքն է, թե ոչ մի մարդ շնչավոր չէ, որը հակադեմ է սկզբնական եզրահանգմանը. «Բայց աստ մանաւանդ այսպէս, ոչ ոչ մարդ ներանձնաւոր, որ հակակայի սկզբան բաղեզերմանն» (էջ 120)։

Հարցերի այն շրջանը, որ քննարկվեցին տվյալ հոդվածում, չի կարող

---

29 Այս դրույթը Արիստոտելի մոտ ձևակերպված է հետևյալ կերպ. «Подвергать превращению значит образовать через изменение заключения силлогизм, в котором или [больший] крайний термин не присущ среднему, или средний не присущ меньшему. А именно, если заключение подвергается превращению и одна посылка остается неизмененной, то другая необходимо отрицается...» (Аристотель, Соч., т. 2, էջ 221)։

լրիվ պատկերացում տալ Դավիթ Անհաղթի ուսմունքի մտսին մտահանգման վերաբերյալ։ Դա այն պատճառով, որ Դավիթ Անհաղթի աշխատությունները մեզ հասել են միայն մասամբ։ Դա հատկապես վերաբերում է «Մեկնութիւն ի վերուծականն Արիստոտէլի» հետազոտությանը, որն ակնհայտորեն միայն մի մասն է ի սկզբանէ գրված աշխատության։ Սակայն արդեն այն, ինչ դարերը հասցրել են մեզ որպես Դավիթ Անհաղթի տեսական ժառանգություն, մասնավորապես վկայում են, որ մենք գործ ունենք ոչ միայն մտահանգումների տրամաբանության գիտության տեսանկյունից մի խիստ կարևոր մեկնաբանման հետ, այլ նաև այն, որ առանց վերջինս հաշվի առնելու, մենք ճիշտ և ամբողջական պատկերացում չենք ունենա արիստոտելյան տրամաբանության էության ու զարգացման մասին։

УЧЕНИЕ ДАВИДА НЕПОБЕДИМОГО ОБ УМОЗАКЛЮЧЕНИЯХ

ГЕОРГ БРУТЯН
Член-корр. АН Арм. ССР

Резюме

Умозаключение — центральная проблема логики — рассматривается Давидом Непобедимым в тесной связи с познанием и его формами. Правильное понимание его природы, по замыслу армянского логика, служит средством опровержения скептицизма и агностицизма. Он раскрывает значение силлогизма как для познания окружающей действительности, так и для самопознания.

Сущность умозаключения, его виды, в том числе виды непосредственных умозаключений исследуются Давидом Непобедимым на основе интерпретации аристотелевской силлогистики. При этом он полемизирует с критиками некоторых положений защищаемой им концепции, развивая искусство аргументации.

Текстуальный анализ «Первой аналитики» Аристотеля Давидом Непобедимым дает основание по-новому осмыслить одну из важных проблем истории логики — истинную форму аристотелевского силлогизма. Этот анализ показывает также отличия аристотелевского понимания формы силлогизма от ее интерпретации стоиками. Давид Непобедимый рассматривает структуру силлогизма, природу его посылок, термины силлогизма, вопрос о совершенных и несовершенных силлогизмах и аргументированно показывает правильность аристотелевской точки зрения по этим вопросам.

Давид Непобедимый отмечает, что слабость интерпретации стоиками умозаключений из суждений с отношениями в том, что в них не сформулировано то общее положение, которое дает основание вывода зак-

лючения из посылок. В то же время он подчеркивает важную для понимания разных систем логики идею о том, что правомерность вывода заключения из суждений с отношениями зависит от конкретной природы самого отношения. Это положение свидетельствует о необходимости содержательного анализа по крайней мере некоторых видов логического вывода.

Подход Давида Непобедимого к рассмотрению ряда важных проблем логики показывает, что способ исследования он обусловливает характером рассматриваемого предмета.